مجلة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان — ١٥ شارع عماد الدين — تليفون ٥٥٦٣٦

Ե. ՏԱՐԻ — ԹԻՒ — 4 — 1961

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		Էջ
Հ.Բ.Ը. Միութեան Դասախարակչական կոչումը	Գարեգին Եպս. Խաչատուրեան	1
Նախագահ Ա. Մանուկեանի ճառը 47րդ ժողովին	Թղթակից	3
Կարապետ Պէյ Շերիմճեան	Ս. Ալպոյաճեան	8
Մեր Նորաստեղծ Դարն է գալիս (քերթ.)	Վահրամ Հանեան	9
Բարեգործականի Կեանքէն		9
Հ.Բ.Ը.Միութեան Մասնաճիւղին Խօսքը (քերթ.)	Վահէ Հայկ	12
Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան կեանքէն		13
Մփիւռքահայ կեանքէն		17
Հայրենի Աշխարհ		23
Նոր հրատարակութիւններ		24
Վարդատեսը և Դալար Մերունդ		

Ազդ

— *Տեղեկատուն առ այժմ կը հրատարակուի երկու ամիսը անգամ մը.*

— *Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու և հանդէսներու առաքումները կատարել խմբագրութեանս հասցէին՝*

Խմբագրութիւն Տեղեկատուի
15, *Էմատ էլ Տին փողոց*
Նամակատուփ 717, *Գահիրէ — Հեռախօս* 55636
Rédaction Déghégadou
15, Rue Emad El Dine
B.P. 717, — Le Caire — R. A. U.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ....

Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Յոբելինական հանդիսութիւնները կը սկսին
Դատահանդէսով
որ տեղի պիտի ունենայ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ընթացքին,
Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐ Մարզարանին մէջ,
Ժոխ, այլազան, հանելի յայտագրով եւ կը փակուին
Մօակութային, Գրական - Գեղարուստական հանդէսով Հոկտեմբերի մէջ

Մանրամասն յայտագիր և անհրաժեշտ ծանօթութիւններ՝ յաջորդիւ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՎԵՐ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ
ՇԱՀԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ՝
Ո՞Վ ԵՒ Ո՞ՒՐ Է ԱՍՏՈՒԱԾ
(իր փնտռուած fարոզներու հաւաքածոն,
յաւելեալ ինքնակենսագրութեամբ)
Գին 50 Ե.Դ. — դիմել՝ Գրավաճառ Փանիկեանի —
Տելթա Պուքչոփ, 30 Շերիֆ փողոց, Գահիրէ:

تشيخادو

مجلة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان — ١٥ شارع عماد الدين — تليفون ٥٥٦٣٦

Ե. ՏԱՐԻ — ԹԻՒ — 4 — 1961

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ

Հակառակ իր նպատակին բացորոշ բովանդակութեան՝ դեռ կատարելապէս ըմբռնուած չէ, կը խորհիմ, ճշմարիտ եւ ամբողջական կոչումը այս մեծ Միութեան: Ոչ լոկ Որբախնամ Մարմին մըն է ան, ոչ ալ նպաստամատոյց կազմակերպութիւն մը, ոչ քաղաքական կուսակցութիւն մը, ոչ ալ տնտեսական - փիլիսոփայական աղանդաւորութիւն մը, եւ ոչ կրօնական-յարանուանական հիմնարկութիւն մը: Այս բոլորէն վեր եւ այս ամէնուն բիւրեղացած ճշմարտութեամբը սնանելու եւ աճելու ատակ ու տրամադիր, բայց մանաւանդ վարդապետական քարացումներէ եւ գաղափարական վերացումներէ զերծ՝ զուտ Բարիին շունչով ոգեւորուած, եւ համամարդկային հոգեկան արժէքներու հետ հաշտ ազգային մաքուր զգացումներով տոգորուած Հայութեան ոգիին անխարդախ արտայայտութիւնն է ան: Իր կոչումն է գլխաւորաբար հաւատարիմ մնալ այդ ոգիին, մշակել զայն իր մէջ նոր լոյսերով ու ժառանգութիւններով, եւ անով ներշնչել ու դաստիարակել իրեարայաջորդ բոլոր սերունդները գաղութներուն մէջ մանաւանդ:

Իսկ դաստիարակչի այս հանգամանքն է, ըստ իս, որ համահայկական այս կազմակերպութիւնը կը դարձնէ անհրաժեշտ ու մնայուն: Երբ մէկ կողմէ ՆՈՒՊԱՐԱՇԷՆի նման աւաններ կը կանգնէ Մայր-Հայրենիքին մէջ, չի մոռնար նաեւ կրթական յարկեր հիմնել ու զօրացնել գաղութային բարոյական հայրենիքներուն մէջ: Միութեան ծրագրին մէջէ «հիմնել կամ նպաստով օժտել վարժարաններ, մատենադարաններ, ընթերցարաններ» այն բոլոր գաղութներուն մէջ մասնաւորապէս՝ ուր Հայաստանեայց Ոգին կենդանի պահելու, զայն իր հարազատ շունչովն ու դրոշմովը մշակելու եւ ուժաւորելու հնարաւորութիւնն ու պատեհութիւնները չեն պակսիր: Հ.Բ.Ը. Միութեան այժմու նախագահը՝ (*) հարազատ ժառանգորդ եւ հաւատարիմ գործադրիչ իր մեծանուն հօր գաղափարականին՝ մեզի կը ներշնչէ ամէն յոյս թէ աննկատ պիտի չմնայ այս բացարձակ անհրաժեշտութիւնը, եւ թէ ինքը պիտի կրնայ մէկ կողմէ հաւատարիմ մնալ Միութեան հիմնական սկզբունքներէն բխած աւանդութիւններուն, միւս կողմէ տալ անոր նոր ոգեւորութիւն, նոր կենսունակութիւն եւ նոր մղում, պարտականութեանց նոր ուղիներով առաջորդուելու նոր նուաճումներու եւ նոր յաղթանակներու: Իր սահմանն ընդարձակ է այժմ, ամփո-

(*) Կ'ակնարկուի Զարեհ Պէյ Նուպարի:

փելով իր մէջ բովանդակ Հայութիւնը, Արեւելքն ու Արեւմուտքը, Հայրենիքն ու Գաղութը: Եւ գործունէութեան այս լայնածաւալ դաշտին մէջ կասկած չկայ թէ հայ ժողովուրդին «մտաւոր եւ բարոյական զարգացման» ծրագիրը կ'ընդգրկէ ազգայինն կարագրի մեակումբ: Եւ եթէ նկատի առնենք վատասերիչ, ապազգայնացուցիչ, օտարացուցիչ եւ ծուլիչ ազդակներն այն միջավայրերուն՝ որոնց մէջ սփռուած է Հայութեան ոչ արհամարհելի մէկ զանգուածը՝ դժուար չըլլար մակարերել լրջութիւնն ու հրամայականութիւնը Միութեան պարտականութեան՝ ջանալ անխաթար պահելու այս ազգային նկարագիրը, մտաւոր եւ բարոյական զարգացման տոհմիկ գաղափարը մը ստեղծելով նաեւ գաղութներուն մէջ: Կը խոստովանինք թէ ծանր հարց է այս, որ կը լուծուի ոչ թէ զգացական նախանձախնդրութեամբ, այլ տրամաբանական կշռադատութեամբ: Ըղձանք մըն է ան, որուն իրագործումը կը պահանջէ լուրջ ու ծրագրուած պայքար մը: Այդ պայքարը պէտք է դրուի գաղափարական հողի վրայ. բարոյական ոյժ ու հմայք ներկայացնող եւ բարձր քաղաքակրթութեան մը հիմնական սկզբունքներուն հետ հաշտ հոգեկան արժէքներու սպառազինութեամբ զօրացած: Հ. Բ. Ը. Միութեան կոչումին օտար չէ միջամուխ ըլլալ այսպիսի պայքարի մը եւ յանգեցնել զայն ակնկալուած արդիւնքի մը:

Հ. Բ. Ը. Միութիւնը դիտել միայն իր բացասական կողմէն՝ այնքան անարդարութիւն է, որքան անձկամտութիւն է տեսնել զայն լոկ իր դրական կողմէն: Ան, ամէն բանէ առաջ, մարդկային կազմակերպութիւն մըն է, կարօտ ժամանակի եւ փորձառութեան դասերուն՝ հասնելու համար իր յարաբերական կատարելութեան: Բացարձակը մահկանացուներուն տրուած չէ դեռ: Անշարժութիւնն ու քարացումն են վտանգաւոր: Վերաքննութիւն, ինքնաքննադատութիւն եւ վերագնահատութիւն, — տսոնք են այն անզանցառելի փորձաքարերը՝ որոնցմով կ'երաշխաւորուին այսպիսի կազմակերպութեան մը անկասելի յառաջխաղացքն ու զարգացումը: Մեր Միութիւնը կուտայ ապացոյցը կեանքի եւ ողջմիտ ուղղութեան: Երեսուն տարիներ բաւական չեն բոլոր իղձերը, բոլոր խորհուրդները, բոլոր տեսութիւններն ու պահանջները միակ կեդրոնական առանցքով մը համադրել — համաձայնեցնելու եւ մարմինի մը մէջ խտացնելու, դարձնելով զայն ամէն կողմէ անխոցելի: Կեանքի յառաջընթացը կը բերէ իր հետ նոր պայմաններ ու պահանջներ, նոր խնդիրներ, որոնք կը կարօտին նոր ուսումնասիրութիւններու, նոր լուծումներու: Ասիկա չի կրնար ըլլալ առանց ժամանակի: Ծարձակողական բուռն ոգին եւ անհամբեր ու անհանդուրժող փութկոտութիւնը ժխտումն են լրջախոհութեան, ողջադատութեան եւ յստակատեսութեան: Թող ամէն սիրտ, ամէն միտք եւ ամէն ձեռք ասի գիտնան եւ հրաժարելով իրենց եսապաշտ նախասիրութիւններէն, կանխակալ կարծիքներէն, սեւեռամտութիւններէն, նախապաշարումներէն եւ այլ մարդկային իմացական-հոգեկան մոլորամէտ հակումներէն, պինդ փարին այս համահայկական կազմակերպութեան անուան քառեակ նշանաբանական գիրերու մէջ մարմնաւորուած Ոգիին. Հ. Բ. Ը. Մ.:

Ամէն ինչ եւ ամէն ոք պարիսպէն ներս, բացի քանդող կիրքերէ եւ ձեռքերէ: Ստեղծագործութիւն եւ զարգացում, շինութիւն եւ բարեկարգութիւն՝ համերաշխութեամբ եւ համագործակցութեամբ, հիմնուած ազատ խորհրդութեան եւ առողջ քննադատութեան կամ ինքնաքննադատութեան վրայ, անփոփոխ բեւեռակէտ ունենալով ԲԱՐԻՆ իր ամենալայն առումով, — ահա ինչ որ մեզի կը սորվեցնեն այդ չորս տառերը իրենց գաղափարական լծակցութեամբը, որ շքեղ արտայայտութիւններէն մէկն է Հայաստանեայց Ոգիին:

Վստահ ենք թէ սկսած նախագահէն մինչեւ ամենախոնարհ անդամը այս մեծ Միութեան, իմաստութիւնը պիտի ունենան միշտ այդ ոգիով առաջնորդուելու եւ առաջնորդելու:

Հ. Բ. Ը. Միութեան Երեսնամեայ Յոբելեանին առիթով այս տկար խորհրդածութիւնները կասկած չկայ թէ աւելի հզօր շեշտերով կ'ոգեւորեն այսօր կազմակերպութենէն ներս եւ դուրս բոլոր Հայերն

ՆԱԽԱԳԱՀ ՏԻՐ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՃԱՌԸ 47ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

(Շար. Նախորդ թիւէն)

Հակառակ այն բացորոշ իրողութեան թէ Միութեան ազգապահպանման մեծածախս ձեռնարկները արտասահմանի մէջ կը գտնուին և Ամերիկայի հայութիւնը ինքալ ունի իր համայնքային ստիպողական կարիքները՝ դպրոցի, եկեղեցիի, մշակութային կեդրոններու համար, եւն, ան կը շարունակէ տալ անտրտունջ, անվարան, առանց որեւէ սակարկութեան։

Մեր քննութեան առարկան եղող 1959 տարեշրջանին, Միութեան բոլոր ձեռնարկներուն համար ծախսեր ենք 592,112 տոլար և այդ հսկայ գումարէն մի միայն 35,000 տոլար յատկացուցեր ենք այս գաղութին տեղական կարիքներուն։ Այսինքն՝ 250,000 հոգի հաշուող հայութեան զանգուածի մը համար, տրամադրեր ենք լոկ քիչ մը աւելի դրամ որքան կուտանք Ցունաստանի 8000ի բնակչութիւն մը ունեցող մեր գաղութին։

Երբ վերլուծենք այս իրողութիւնը, մէկ հոգեպարար եղրակացութեան միայն կրնանք յանգիլ։

Ամերիկահայութիւնը իր սիրտը կապած է իրականութեան մը, որ հակառակ իր ցրուածութեան, խորքին մէջ անբաժանելի միութիւն մըն է։ Ան կ'ապրի ամբողջ ազգին հետ, որ մէկ է, ո՛ւր որ ալ գտնուին անոր զաւակները։ անոր հետ կը տառապի և կը հրճուի, և կը զոհաբերէ անհաշիւ, որպէսզի հայ հաւաքական կեանքը ըլլայ աւելի պայծառ, աւելի երջանիկ։

Անհաւասիկ, շատ սեղմ արտայայտութեամբ մը, Ամերիկահայութեան հոգեբանութիւնը։

Ողբասաց մարգարէներ ապագան մռայլ կը տեսնեն և կը խորհին թէ այս լուսաւոր պատկերը բոլորովին պիտի մթագնի 20-25 տարի վերջ։ Չեմ յաւակնիր գուշակ մը ըլլալ եւ գալիք օրերու գաղտնիքին վարագոյրը վերցնել։ Բայց ամէնքս ալ գիտենք թէ այդ յոռետես խորհուրդները գոյութիւն ունեցած են ասկէ 25, 30 տարի առաջ, և սակայն Ամերիկայի մեր գաղութը այսօր հայ է աւելի քան երբեք։ Պահ մը անդրադառնանք եկեղեցաշինութեան, դպրոցներու կազմակերպութեան, համայնքային կեդրոններ կառուցանելու մտահոգութեանց, տեղադրատ աշխատանքին, և արդար ըլլանք վըճռելու թէ ասոնք հոգեվարքի ջղաձգութիւններ են, եթէ ոչ ազգային ոգիի, ինքնութեան պահպանման զօրացում և աճում։

Հայ գաղութներուն ամենամեծին՝ Ամերիկայի մէջ գտնուիլը ուրեմն Հ. Բ. Ը. Միութեան ղեկավարութեան, անչափելի, նախախնամական բարիք մը եղած է, զոր ոչ ոք կրնայ հերքել կամ ուրանալ։

Մեր անդամակցութեան կէսը այս երկրին մէջ կը գտնուի, և ան մեր շարքերուն մէջ է ո՛չ թէ անուանապէս, այլ յարատեւօրէն կը գործէ և կը զոհաբերէ։ Մեր մեծ և հզօր կառավարութեան լայնախոհ օրէնքները, ինչպէս ամէն բարեսիրական ձեռնարկ, մեր ջանքերն ալ կը հովանաւորեն ու կը քաջալերեն և կը գործենք ազատ ու անկաշկանդ։

Եթէ տեղեակ ըլլայիք թէ ուրիշ երկիրներու մէջ փոքրամասնութեանց ազգային կամ մարդասիրական ձեռնարկները ի՛նչ սահմանափակումներու, ձեւակերպու-

անխտիր։ Երանի՜ թէ, սակայն, ասի առիթ եւ խթան մը ըլլար շարքը խտացնելու՝ գիտակցօրէն նուիրուելու եւ զոհաբերելու առաջադրութեամբ զօտեպնդուած նոր անդամներու պատուաբեր ու ստուար թիւերով։

«Բաջալերութիւնը հրաշքներ կը գործէ. եթէ կ'ուզես ազգիդ բարին, քաջալերէ այն ոյժերը որ յօգուտ ազգին կը գործեն»։ Վաթսունամեայ այս պատգամը անմահն Գրիգոր Օտեանի՝ այսօր ալ, աւելի քան երբեք, անհրաժեշտ է որ հրաւիրակ ծայնը հանդիսանայ, ուղղուած իւրաքանչիւր Հայու գործակցութեան եւ պարտականութեան համար Հ. Բ. Ը. Միութեան կոչումին ու նպատակին շուրջ։

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

«Ցուցագիր» 1936

թեանց և անվերջ քննութեանց, հարցապնդումներու ենթարկուած են, փառք պիտի տայիք Աստուծոյ, որ Բարեգործականի կեդրոնը Ամերիկա փոխադրուած է քսան տարիէ ի վեր։

Միութեան արտասահմանի վարիչներն ալ մեր այս գոհունակութիւնը կը բաժնեն անվերապահօրէն, իսկ եթէ անոնց մէջ մասի վրայ համրուող քանի մը անձեր տարբեր ձեւով կը մտածեն, կը նշանակէ թէ Բարեգործականի ոգին ճշմարիտ ըմբռնումը աղօտ է իրենց մէջ և անոր ապահովութեան ու զօրացման համար բուռն նախանձախնդրութիւն մը ցոյց չեն տար։

Կարեւոր նկատեցի այս ընդհանուր տեսութիւնը ընել հաստատելու համար թէ Բարեգործականի կենսունակութիւնը անվիճելի է. 55 տարիներու իր անցեալը ո՛չ թէ յոգնութեան, մաշումի ազդակ մըն է, այլ անոր համար նոր աւիւ, նոր ուժի աղբիւր, և Ամերիկայի մէջ անոր ժողովրդականութիւնը, անոր ստեղծած ոգեւորութիւնը, անոր ղեկավարութեան արդիւնաւէտ աշխատանքը ակներեւ գրաւականներ են թէ ան իր շարունակական վերելքին հետ աւելի հիմնական, մայրուն գործերով հայ կեանքին բարձրացման զօրավիգ պիտի կանգնի միշտ։

Այժմ կ'ուզեմ մէկ ամփոփ պատկերը տալ Միութեան 1959 ի տարեշրջանի գործունէութեան։ Այս մասին ըսելիքներս շատ պիտի չընդլայնեմ, որովհետեւ ձեր ձեռքը ունիք մեր ընդարձակ Տեղեկագիրը, որ ձեզ իրազեկ կ'ընէ Միութեան ձեռնարկներուն բոլոր մանրամասնութեանց։

Ինչպէս շատ անգամներ կրկնած ենք և դուք լաւատեղեակ էք արդէն, այսօր Միութեան ջանքերուն առանցքը կը կազմէ կրթական և մշակութային գործը։ Մեր մեծագոյն մտահոգութիւնն է ազգային առողջ դաստիարակութեան մը բարիքները ծաւալել բոլոր հայ գաղութներուն մէջ, և այդ դաստիարակութիւնը ջամբել իր յաջորդական բոլոր աստիճաններով, մանկապարտէզէն սկսելով անցնիլ նախնական և երկրորդական կրթութեան և վերջինը, որքան կարելի է, պսակել համալսարանական մասնագիտութեամբ։

Հայ նախակրթարանի մը կամ երկրորդական վարժարանի մը ընթացքը աւարտող պատանիները հայութեան համար չեն կորսուիր երբեք՝ ո՛ւր և ի՛նչ պայմաններու մէջ ալ որ գտնուին, որովհետեւ իրենց ընդհանուր ուսման հետ ստացած են փրկարար մկրտութիւն մը՝ մեր լեզուին, մեր պատմութեան, մեր աւանդութեանց տարիներով ընտելանալով և զանոնք իրենց իմացական, հոգեկան կեանքին անուշիչ աղբիւրը ունենալով։

Իսկ երկրորդական ուսումը այդ ստացումները աւելի կ'ընդլայնէ, կը խորացնէ և ազգային դաստիարակութեան անջնջելի դրոշմը կուտայ մեր պատանիներուն։ Անոնք, իրենց աւանդուած ուրիշ հիմնական գիտելիքներու շնորհիւ նաեւ, կը դառնան կրթուած, զարգացած անձեր, աւելի դիւրութեամբ կը մղեն իրենց կեանքի պայքարը և միանգամայն ծառայութեան իրենց գնահատելի բաժինը կը բերեն մեր ժողովուրդին։

Իսկ երբ ուսումնասէր, օժտուած երիտասարդներ իրենց երկրորդական կրթութենէն վերջ բախտը կ'ունենան համալսարանական ուսում ստանալու և մասնագիտութեան մը տիրանալու, ակներեւ է թէ, անոնք մեր մտաւորական և համայնական կեանքին համար կը դառնան անգնահատելի ուժեր եւ գործիչներ։

Այս ծրագրին համաձայն է որ կազմակերպուած է մեր կրթական ընդարձակ գործը, զոր ուրիշ տարիներ ձեզի ներկայացուցած եմ արդէն և որուն գլխաւոր գիծերուն վերյիշումը միայն պիտի ընեմ այսօր։

Ունինք 16 սեփական դպրոցներ, Լիբանանի, Կիպրոսի, Թէհրանի և Աթէնքի մէջ։ Ասոնց թիւը 1958 ին 17 էր, բայց փոքր դպրոց մը Հալէպի մէջ միացուցած է մերձակայ մեծ վարժարանի մը։ Միութեան դպրոցներուն մէջ կ'ուսանին 3000 ի մօտ աշակերտներ և կը պաշտօնավարեն 200 է աւելի ուսուցիչներ։ Այս թուանշանները ինքնին ցոյց կուտան թէ ո՛րքան լուրջ է Բարեգործականի կրթական առաքելութիւնը։

Կարգ մը իրողութիւններ այս պատկերը շատ աւելի տպաւորիչ կ'ընծայեն։

Մեր դպրոցներէն չորսը երկրորդական

վարժարաններ են և մեծագոյն ծառայութիւնները կը մատուցանեն Մերձաւոր Արեւելքի մեր գաղութներուն։ Անոնց շրջանաւարտներուն թիւը կը հասնի 910ի և այդ երիտասարդներն ու պարմանուհիները մեր հանրային կեանքին մէջ ուշագրաւ դեր մը կը կատարեն արդէն։ Անոնց մէջ կան գրողներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, խմբագիրներ, շատեր ազգային զանազան ժողովներու մէջ կը գտնուին և անոնցմէ 250է աւելի մեր կրթական գործին կը ծառայեն իբրեւ ուսուցիչ կամ ուսուցչուհի։

Այս արդիւնքը ինքնին պերճախօս ապացոյց մըն է թէ Բարեգործականը ի՛նչ մեծ նպաստ մը կը բերէ մեր հանրային և մտաւորական կեանքին յառաջդիմութեան և բարձրացման։

Միութեան կրթական գործունէութիւնը իր սեփական վարժարաններուն մէջ չի սահմանափակուիր։ Մեր Տեղեկագրին մէջ մանրամասնօրէն յիշուած է թէ զանազան գաղութներու մէջ անհրաժեշտ նպաստներ կը յատկացնենք քանի մը տասնեակ հայ դպրոցներու, որպէսզի անոնք՝ նիւթական անձկութեան չմատնուին և անմեղ հայ մանուկներ ուսման բարիքներէն չզրկուին։

Միութեան միմիայն դպրոցական ձեռնարկներուն համար 1959 ին յատկացուցած ենք 302,664 տոլար, և կը խորհիմ թէ այս գումարը կրնայ որոշ գաղափար մը տալ այդ ձեռնարկներուն ընդարձակութեան, նշանակութեան, մեր ազգային կեանքին բերած անհուն բարիքին մասին, և արդար հպարտութեամբ լեցնել մեզ։

Մեր ուրախութիւնը անսահման է, որ մեր կրթական գործը իր բարձրագոյն մակարդակին հասած է այսօր, երբ ի վիճակի ենք հայ ուշիմ և ուսումնատենչ պատանիներու և օրիորդներու համալսարանական ուսման զօրեղապէս ստատբելու։ Մեր Միութիւնը երկար տարիներէ ի վեր Ռափայէլ Մարկոսեան Հիմնադրամին շնորհիւ Ֆրանսայի մէջ կ՚ալլակցէր արհեստագիտական զանազան ճիւղերու հետեւող ուսանողներու։ Աւելի քան տասը տարի առաջ սկսանք համալսարանական թոշակ տալ փոքրաթիւ տղոց, նախ շնորհիւ բարերար Իւզպաշեանի այդ նպատակով ըրած նուիրատուութեան և ապա բարերար Տոքթ. Մկրտիչեանի նորահաստատ Հիմնադրամին, և ունեցանք բարձրագոյն կրթութեան տիրացած 30 երիտասարդներ և պարմանուհիներ։

Այսօր, այս փրկարար ծրագրին պատկերը անհունօրէն խրախուսական է և համալսարանական թոշակներու յատկացումը մեր Միութեան կանոնաւոր գործունէութեան մէկ էջը կը կազմէ։ Այս նպատակաւ ունինք մեծագումար Հիմնադրամները Գայսէրլեան, Մկրտիչեան, Մարկոսեան, Գարակէօզեան, Ցովակիմեան երախտաշատ մեծ բարերարներուն և ուրիշ վեհանձն նուիրատուներու, և 1959ին ի վիճակի եղած ենք 193 ուսանողներու կրթական թոշակ յատկացնել 42,460 տոլար։

Ըստ կտակարար բարերարներու կամքին, այդ 193 թոշակընկալներէն 88ը կը հետեւին արհեստագիտական կամ երկրորդական ուսման, իսկ մնացեալ 105ը կանոնաւոր համալսարանականներ են։

Երբ անդրադառնանք տրուած գումարին և օգտուողներու թիւին, կարծեմ ներելի կ՚ըլլայ խորհրդածել թէ պետական կեանք ունեցող կարգ մը պզտիկ ազգեր արդեօք նոյն զոհողութիւնը կ՚ընե՞ն իրենց նոր սերունդին համար։

Կրթաթոշակի հիմնադրամները յաւէրժական յիշատակարաններ են մեր անմահ բարերարներուն անուան, ուժի նոր աղբիւր մը Հ.Բ.Ը. Միութեան և ապահով միջոց մը՝ մեր մտաւորական վերելքին ու ազգին մէջ առաջնորդող դէմքերու պատրաստութեան համար։

Մեր ժողովուրդին մտաւորական և հոգեկան կեանքի ծաղկումին ու զարգացման կը սպասարկեն, այսինքն Միութեան ազգապահպանման հիմնական նպատակներուն մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւեն, մեր մշակութային բազմաճիւղ գործերը, որպէս անմիջական լրացուցիչ մասերը մեր կրթական ընդարձակ ծրագրին։

Երկար պիտի ըլլար այս գետնին վրայ նոյնիսկ գլխաւոր իրողութեանց պատկերացումը, և պիտի բաւականանամ քանի մը ընդհանուր յիշատակումներով, որոնց բոլոր խրախուսիչ մանրամասնութիւնները տրուած են ձեր ի ձեռին ունեցած տեղեկագրին մէջ։

Մեր մշակութային ջանքերը կ՚ընդգրկեն Միութեան երիտասարդական կազմակերպութեանց մեղուաջան, զմայլելի գործերը, մեր ակումբները, մատենադարանները, մարզական—գեղարուեստական—ընկերային կեդրոններու կառուցումը, Միութեան կողմ-

մէջ լոյս ընծայուած հրատարակութիւնները, ուրիշներու կողմէ հրապարակ հանուած կարեւոր երկերու գնումը, հեղինակներու քաջալերանքը, եւն.։

Այս բոլոր նպատակներուն համար 1959ին յատկացուցած ենք 125,750 տոլար։

Լոկ կրթական և մտաւորական կալուածին մէջ ուրեմն, նկատի ունենալով մեր դպրոցական, համալսարանական թոշակի և մշակութային ձեռնարկները, 1959 տարեշրջանին 470,000 տոլարէ աւելի գումար մը ծախսած ենք։

Եթէ այս զոհողութիւնը եղած է մեր ժողովուրդին վաղուան կեանքին համար, անոր ապագան աւելի բարելաւ, աւելի պայծառ ընելու հիմնական ծրագրով, գոյութեան պայքարին մէջ անոր այսօրուան կարիքները անտես չենք առած երբեք։ Բաւել կ'ուզեմ թէ մեր կրթական և մշակութային ձեռնարկներուն հետ, միեւնոյն հոգածութեամբ չարունակած ենք մեր խնամատարական գործը։

Մեր բուժարաններն ու առողջապահական կեդրոնները այս շրջանին եւս հազարաւոր կարօտ հիւանդներ դարմանած են, անոնցմէ յուրջ գործողութեանց պէտք ունեցողներուն ծախքերը հոգացած ենք և ձրիաբար դեղ հայթայթած ենք բոլորին։ Անցեալ տարիներու նման, դարձեալ մեծաքանակ փոչի կաթ ղրկած ենք Լիբանան, Սուրիա, Յունաստան, Երուսաղէմ, որմէ օգտուած են անթիւ դպրոցականներ, ծծկեր մանուկներ, ունկար ծերունիներ, գաղթականներ ու հիւանդներ։ Հարիւրաւոր աղքատիկ ընտանիքներու դաւակներ ամառը օդափոխութեան տարուած են և կազդուրուած են, մեծ մասամբ Յունաստանի մէջ, մաս մը Հայէպ և մաս մըն ալ Մարսիլիա։ Շարունակած ենք Աթէնքի և Սելանիկի մէջ կենսաթոշակ տալ 40 ի չափ անտէր ծերունիներու և տարեկան որոշ յատկացումներով թեթեւցնել բազմաթիւ տարեց և աննեցուկ մտաւորականներու ապրուստի նեղութիւնը։ Կեդր. Վարչութեան Նպաստից Յանձնաժողովը չափելի օգնութիւն ընծայած է արտասահմանի բազմաթիւ կարօտեալներու և միեւնոյն ձեւով՝ Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովի Ընկերային Ծառայութեան Մարմինը, Միութեան Եգիպտոսի եւ Եւրոպայի Կեդրոնական Յանձնաժողովները հոգածութեան առարկայ ըրած են իրենց շրջանակներուն մէջ նեղութեան մատնուած բազմաթիւ աղգայիններ։ Միութեան խնամատարական գործին համար ծախսուած է 69,300 տոլար։ (Կտակային պայմանագրութեանց համաձայն, աղգային հաստատութեանց և անհատներու եւս կ'ընենք կարեւոր յատկացումներ, որոնք յիշուած են Տեղեկագրին մէջ)։

Վերեւ համառօտակի թուարկուած ձեռնարկներ կը յուսամ թէ որոշ գաղափար մը կուտան մեր Միութեան մէկ տարուան գործունէութեան մասին։ Կը յուսամ նաև թէ երբ մեր ամբողջ ջանքերը «ազգապահպանում» յորջորջումին տակ կը դնենք. ո՛չ ոք կրնայ երկմտիլ թէ այդ ծանրիմաստ բառը կը գործածենք ըստ բախտի, անսփոփական կամ քարոզչական միտումներով։ Մէկ տարուան մէջ Միութեան յարատեւօրէն հետապնդած նպատակներուն համար ծախսեր ենք 592,000 տոլարէ աւելի գումար մը և կը խորհիմ որ այս խօսուն իրականութիւնը անառարկելի կերպով կը հաստատէ թէ այս օրհնեալ կազմակերպութիւնը ունեցած է և ունի միա՛յն մէկ փառասիրութիւն և մէկ անփոփոխելի իտէալ — ծառայել մեր ազգին։

Երջանիկ ենք որ այս ծառայութիւնը ի վիճակի ենք շարունակելու աննահանջ, առանց կքումի կամ տկարութեան, և միշտ աւելի կարկառուն արդիւնքներով, շնորհիւ Միութեան ապահով և յարաճուն ելեւմուտքին։

Քիչ յետոյ ձեզի պիտի ներկայացուի մեր հաշուական տեղեկագիրը, մանրամասնօրէն և զեկուցում մը պիտի լսէք նաեւ մեր գանձապահին՝ Պր. Զարլզ Գարակէօզեանի կողմէ։ Ես ձեր ուշադրութեան պիտի յանձնեմ միայն քանի մը թուանշաններ, կոտորակներ զանց ընելով։

1949 տարեշրջանի փակումին, մեր ընդհանուր գոյքն (asset) է, 10,090,336 տոլար։ Մեր ամբողջ ելքը եղած է 773,987, որմէ 292,112 տոլարը յատկացուած է ազգապահպանման գործին, 144,396 տոլարը Միութեան բոլոր շրջանակներու վարչական ծախքերուն և 38,579 տոլարը տարուած է հիմնադրամներու պահեստին։

Կը փափաքիմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել մեր գոյքին աստիճանական բարձրացումին վրայ, տալով վերջին չորս տարիներու բաղդատական պատկերը, կլոր թուանշաններով. 1956 ին՝ 8,300,000 տոլար, 1957 ին՝ 9,000,000, 1958 ին՝ 9,563,000 և 1959 ին՝ 10,090,000։

Այս թուականները տոմարական արժէքներ են, և ոչ թէ սակարանի։

Չեմ ուզեր աւելի երկարել, տալով նաեւ բաղդատական գումարները մեր ազգապահպանման յատկացումներուն, որոնք տարուէ տարի միշտ աւելի աճած են։

Միութեան հարստութեան վերաբերեալ խրախուսիչ պատկերը ներկայացնելով, կարեւոր կը նկատեմ ընդգծել մէկ բան, հասկնալի է թէ այդ յաւելումները մասամբ կատարուած են եկամուտներու բարձրացումով, բայց նաեւ՝ ամէն տարի նոր կտակներո՛ւ և նուիրատուութեանց ստացումով։

Բարեգործականի վայելած համազգային վստահութեան, համակրանքին, ինչո՞ւ չէ՝ գուրգուրանքին մասին խօսեցայ ճառիս սկիզբը։ Այս ընդհանուր ապահովութիւնն ու սէրն է անոր վերելքին հաստատ կռուանը։ Եւ ցորքան ազգին սիրտը անոր կապուած կը մնայ, բազմերախտ, օրհնեալ բարերարներ անպակաս պիտի ըլլան և այս նախախմական կազմակերպութիւնը պիտի չարունակէ ապրիլ, աւելի մեծնալ ու զօրանալ և բարիքի յորդառատ աղբիւր մը ըլլալ մեր ժողովուրդին համար։

Երբ Հ. Բ. Ը. Միութեան գործունէութեան սրտապնդիչ պատկերը ներկայացուցի, չեմ կրնար լուռ անցնիլ հայ կեանքին բարեյաջման համար կենսական դեր մը կատարող Գալուստ Կիւլպէնկեան պատկառելի Հիմնարկութեան վրայէն։ Ազգովին կ՚օրհնենք մեծահամբաւ Բարեբարին յիշատակը և երախտապարտ ենք Հիմնարկութեան Խնամակալներէն Տիար Գէորգ Էսայեանի և անոր Հայկական Գործերու Վարիչ Տիար Բոպէռ Կիւլպէնկեանի։

Իմաստուն ծրագրով մը, այս պատուական Հիմնարկութիւնը մեծ թիւով համալսարանական ուսանողներ կը պահէ, հարիւրաւոր դպրոցներու կանոնաւոր նպաստներ կը յատկացնէ, ուսուցիչներու եւրոպական երկիրներու մէջ կատարելագործման համար վարկեր կը տրամադրէ, կարօտ մտաւորականներու չոչափելի օգնութիւններ կ՚ընծայէ և կը կատարէ շինարարական ու մարդասիրական ընդարձակ գործեր, որոնց բոլորին համար ամէն տարի հակայական գումարներ կը յատկացնէ։

Հայ ժողովուրդը խորապէս կը գնահատէ այս բարերարութեանց բարձր նշանակութիւնը և անհունօրէն երախտապարտ է անոնց համար։

Խօսքս վերջացնելով, շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզի և Միութեան այն բացակայ բոլոր իրաւասու անդամներուն զորս կը ներկայացնէք, և բացուած կը յայտարարեմ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 47 դ Ընդհանուր Ժողովը։

Նիւ Եորք, 3 Դեկտեմբեր

ԳԱՀԻՐԷԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Գահիրէի Հ. Բ, Ը. Միութիւնը հետեւեալ հեռագիրը ղրկած է Հանրապետութեան Նախագահին, 8 Մայիս 1961 թուականով։

Տէր Նախագահ,

Գահիրէի Հ. Բ. Ը. Միութիւնը, Միութեան անդամները և անոնց հազարաւոր պարագաները բուռն կերպով կը դատապարտեն և օրինակ այլոց խստօրէն պատժուիլը կը պահանջեն լրտեսական գործով ամբաստանուած դաւադիրներուն և կը մաղթեն որ Աստուած Ձեզ պահպանէ մեր Հայրենիքին համար որուն սիրոյն պատրաստ ենք զոհելու մեր կեանքը։

Նախագահ Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան
ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

Հանրապետութեան Նախագահութեան Դիւանէն հետեւեալ պատասխանը ստացանք 14 Մայիս 1961 թուականով.—

Պարոն Հայկազուն Քիւրքճեան,
Ատենապետ Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան

Շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզի և Ձեր Միութեան անդամներուն այն հեռագիրին համար որ ուղարկած էիք և որմով կը դատապարտէիք քանի մը հայերու Հայրենիքի դէմ գործած արարքը, որուն պատասխանատուութիւնը կարելի չէ անշուշտ վերագրել ամբողջ հաւաքականութեան։

Յայտնելով Ձեզ և Ձեր բոլոր անդամներուն լաւագոյն մաղթանքներս,

ԿԱՄԱԼ ԱՊՏԻԼ ՆԱՍՐ

Միութեան Հիմնադիրներ

ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՇԷՐԻՏՃԵԱՆ

Գրեց Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

1906 Սպրիլ 15 ին, Հ.Բ.Ը. Միութեան հիմնադրութեան օրը ներկայ գտնուողներէն և առաջին նիստի ատենագրութիւնը ստորագրողներէն մէկն է։

Շէրիտճեան Պէյ, ծնած է Իզմիր, և շատ կանուխէն Եգիպտոս հաստատուած։

Մտած է եգիպտական դիւանագիտական ասպարէզը, վարելով բարձր պաշտօններ, 40 տարի անընդհատ։

Եգիպտոսի հայոց փառքի շրջանին, ուր Նուպար Փաշա և Տիգրան Փաշա Տ'Ապրօ այնքան կարևոր դեր մը կը կատարէին երկրին վարչութեան մէջ, Շէրիտճեան Պէյ անոնց հովանիին տակ, ապրած է Եգիպտոսի միջազգային ամենապերճ շրջանակներուն մէջ՝ յարգուելով տեղացի թէ օտար պաշտօնական և ընկերական ամենանշանաւոր ներկայացուցիչներէն։

Կարապետ Պէյ Շէրիտճեան 1906էն մինչև 1924, իր մահը, Հ. Բ. Ը. Միութեան Վերին Մարմնի անդամակցած է խղճմտօրէն և եռանդով։

Ինք, քառասուն տարի Պետութեան ծառայելէ ետք, հանգստեան կոչուած էր, ֆիզիքապէս կայտառ վիճակի մէջ։

Մեծ հմտութիւն ունէր ամէն տեսակ բոթոգոլներու, կենցաղագիտական, յարաբերական կանոններու և անհրաժեշտ ձեւակերպութիւններու։

Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիրներէն ըլլալէ զատ, նշանակելի մասնակցութիւն մը ունեցած է Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի ժողովներուն մէջ և մասաւորապէս շահագրգռուած է կրթական գործով։ Անդամակցած է դպրոցի հոգաբարձութեան և կրթական գործով զբաղուող յանձնաժողովներու։

«Հ.Բ.Ը. Միութեան Կեդր. Վարչական ժողովի անդամ, Կարապետ Պէյ Շերիտճեան մին եղած է այն տասնեակ մը անձնաւորութիւններէն, որոնք Ն. Վ. Պօղոս Նուպար Փաշայի հովանաւորութեան տակ՝ նախ տեղակրեցին միութեան գաղափարի երկունքը,

ապա անոր դայեակներն եղան, զայն փայփայեցին, անոր զարգացումի եռանդը ազատին հսկեցին եւ այսօր իրաւամբ կրնան պարծենալ անոր բարգաւաճութեամբն ու նուիրագործումովը» (Վ. Մալէզեան, «Ոսկեմատեան»)։

Իսկ ինչ որ ամենէն նշանակելին է, պէտք է յիշատակել թէ Կարապետ Պէյ Շէրիտճեան եղած է պատճառ հիմնադրութեան Նուպարեան Մատենադարանին, վասն զի, ինք՝ մտաւորական, սիրահար գեղեցիկ դպրութեանց և արուեստներու, ստանձնած է Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Գրադարանի վարիչի պատուակալ պաշտօնը, իր ընտիր

Վահան Մալէզեան, Բարեգործականի Ոսկեմատեանին մէջ (1906-1931), կը գրէ թէ, Կարապետ Պէյ Շէրիտճեան «կենցաղագէտ մարդ է... գերազանցապէս եւ բառին ազնիւ իմաստով, այսինքն անոնցմէ որոնք ապրելու արուեստը արդիսի պէս ի գործ կը դնեն, որոնց ապրումին վայելչութիւնը երբեք չիջնար, չի զիջանիր եսական գոհեկութիւններու, այլ որոնք իրենց եսին պաշտամունքը (la Culte du moi) կը մտցնեն բարձրորէն, գեղեցկութեան, պայծառութեան, ներդաշնակութիւն փնտռելով ու ստեղծելով իրենց օրերը։ Պուէհեն առաջ, անոր իտեալին ջերմեռանդ հաւատացեալ մը»։

Մեր ՆՈՐԱՍՏԵՂԾ ԴԱՐՆ Է ԳԱԼԻՍ

Մեր դալարուն այգիներից,
Մեր հմայուն ծաղիկներից,
Մեր հանդերից,
Ելնող, իջնող անտառներից,
Ոսկեւորուած մեր արտերից,
Մեր մրգերից,
Հարազատի բո՛յր է գալիս:

Ամեն տնից, ամեն տեղից,
Հայի խոհուն հայացքներից,
Հոգիներից,
Ասուած-չասուած խօսք ու բառից,
Փողոցներում երջող երգից,
Ցուզումներից,
Հարազատի բո՛յր է գալիս:

Այս բարձրացող օճնի քարից,
Տուֆէ քարից,
Քարտաշների զնգուն ձայնից,
Խոյակներից, քանդակներից,
Ծաղկող հողից,
Հարազատի բո՛յր է գալիս:

Այգում նստած այս զոյգերի
Ջեղուն սրտից,
Նրանց վառուող համբոյրներից,
Շուշանայուշ նրանց ճնչից,
Շուունչներից,
Հարազատի բո՛յր է գալիս:

Մեր աշխարհի ամեն մասից,
Մեր դրօշից,
Մեր բիւրաբեւ սխրանքներից,
Մեր նոր ու մեծ երազներից,
Մեր օրերից,
Հրթիռի՞ պէս սլանալով
Եւ հասկի՞ պէս խոնարհուելով,
Ե՛ւ յաղթական, եւ՛ թիւթական
Մեր նորասեղծ դա՛ր է գալիս:

Երեւան ՎԱՀՐԱՄ ՀԱՃԵԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

Միացեալ Նահանգներ —

Նկարչական Ցուցահանդես, Նիւ Ինկլէնտ.—

Հայ երիտասարդ 12 նկարիչներու գործերը ցուցադրուեցան Բարեգործականի Նիւ Ինկլէնտի կեդրոնին մէջ, Կիրակի Հոկտ. 2, կ.ե. ժամը 3—6, նախաձեռնութեամբ Միութեան Սրբազան Պատրիարքին։ Իր ձեւին մէջ նորութիւն մը էր այս ձեռնարկը, քանի որ այսքան թիւով հայ երիտասարդ նկարիչներու գործերը միատեղ չէին ցուցադրուած տեղւոյն կեդրոնին մէջ։ Սոյն ցուցահանդէսին նպատակն էր ճանչնալ մեր նոր սերունդի արուեստագէտները, իրարու ծանօթացնել զանոնք, և մանաւանդ հետաքրքրել մեր հասարակութիւնը ճանչնալու և գնահատելու անոնց ստեղծագործութիւնները։ Ցուցահանդէսին մասնակցեցան Յով. Տօնապետեան, Ֆլորէնս Արապեան, Տիրան Կիւլէզեան, Մէրի Արոյեան, Արշակ Մերկերեան, Ուիլիըմ Փէթրիք, Եւա Մեծօրեան, Ալիս Ռօթ, Ճոն Նսճարեան, Չարլզ Միրաք և Բերուզ Ճանճիկեան։

Ցուցադրուած նկարներուն մէջ տաղանդի ստոյգ նշաններ նկատելի էին։ Յատուկ ուշադրութիւն գրաւեցին Պր. Տօնատեսնեակը, ժամերով զբաղելով Միութեան Գրադարանին մէջ, դասաւորելով գիրքերը, հսկելով անոնց կանոնաւոր շարքին, ընդունելով գրենական նոր նուիրատուութիւնները և թղթակցելով բոլոր այն բարեսէր ազգայիններուն հետ, որոնք տրամադիր էին ճոխացնել Միութեան Մատենադարանը, որ յետոյ Փարիզ պիտի փոխադրուէր՝ կազմելու համար առաջին և գլխաւոր կորիզը Փարիզի Նուպարեան Մատենադարանին։

Շէրիտճեան Պէյ, այսպէս կատարած է երախտագիտութեան արժանի գործ մը, որ իր անունը կը կապէ հայ կարեւոր հաստատութեան մը՝ Եւրոպայի Մատենադարանին հետ։

1961 Ա. Ա.

ու ճոխ գրադարանը նուիրելով Միութեան։

Ինչպէս Վ. Մալէզեան կը գրէ, ան ոչ միայն իր գիրքերը նուիրած է, այլ չէ դադրած գուրգուրանք տածել այդ գիրքերուն վրայ, յաճախ գալով Բարեգործականի գրա-

պետեանի գիմանկարները, բայց մանաւանդ իր Տեսարան մը Մեռնաւոր Արեւելքեն խոշոր պաստառը, որոնց մէջ զգայուն, սըրատես և կազմուած արուեստագէտի մը բարեմասնութիւններով կը ներկայանայ նկարիչը։ Ասիկա Պր. Տօնապետեանի գործերուն առաջին ցուցագրութիւնն էր ամերիկահայ հասարակութեան առջեւ։ Ձեռնարկին վարիչներն էին Մէրի և Մարգրիտ Յովնանեան քոյրերը, որոնց անխոնջ ու արդիւնաւոր կերպով գործակցեցաւ Պր. Արշակ Մերկերեան, որ ճաշակի տէր և խոստմնալից նկարիչ մըն է։ Ցուցահանդէսին օրը հարիւրաւոր անդամներ ու հիւրեր ժամերով կ'երթեւեկէին Բարեգործականի Կեդրոնի սրահին ու Բ. յարկի սենեակներուն մէջ, հետաքրքրութեամբ գիտելով ցուցագրուած գործերը։

Ֆրանսա.—

Հ.Բ.Ը. Միութեան Բարիզի գրասենեակին սրահին մէջ 14 Յունվ.ի շաբաթ օր, կէս օրէ յետոյ, բանախօսեց Տիկին Արշալոյս Խանտանեան, ընտրեալ և հոծ բազմութեան մը առջեւ նիւթ ունենալով՝ Այցելութիւն մը Հայաստանի հնութեանց, osar արեւելագէտներու հետ։ Բանախօսութիւնը կազմակերպուած էր Հ.Բ.Ը. Միութեան Բարիզի Մասնաժողովին կողմէ, որուն ատենապետը՝ Տիար Պատրիկ Կէնճեան, ներկայացուց Տիկինը, իբրեւ հնագիտութիւն ուսումնասիրող մը, և այս առթիւ ըսաւ թէ հայագիտական նիւթերու մասին բանախօսութիւնները մաս կը կազմեն Հ.Բ.Ը. Միութեան ազգապահպանման գործունէութեան, որուն շուրջ հրաւիրեց համախմբուիլ մեր հասարակութիւնը։

Տիկին Ա. Խանտանեան անցեալ Օգոստոսին ներկայ եղած էր Մոսկուայի մէջ գումարուած արեւելագէտներու ժողովին, որմէ յետոյ օտար արեւելագէտներու խումբ մը, 30 հոգիէ բաղկացած, այցելած է Հայաստան, երկու օրուան համար։ Այս խումբին մէջ էին ինքը և Օր. Սիրարփի Տէր-Ներսէսեան։

Տիկին Խանտանեան նախ գրաւոր կերպով ներկայացուց իր տպաւորութիւնները Մայր Երկրէն, ու իր հայրենակարօտ հայուհիի յուզումն ու առաջին ապրումները՝ գրաւիչ լեզուով մը։ Ապա ցոյց տուաւ, լուսաւոր պատկերներով, զանազան տեսարաններ Էջմիածնէն, Զուարթնոցէն, Գառնիի պատմական աւերակներէն, Այրիվանքէն, Սեւանէն, Երեւանի թանգարանէն, Մատենադարանի զանազան թանկարժէք ձեռագիրներէն, եւայլն։

Բանախօսութիւնը որ տեւեց մօտ ժամ ու կէս, հետաքրքրութեամբ և գնահատանքով ունկնդրուեցաւ ներկաներուն կողմէ, որոնք յայտնեցին իրենց շնորհակալութիւնները և շնորհաւորութիւնները բանախօս Տիկնոջ, և լաւագոյն տպաւորութեամբ բաժնուեցան սրահէն։

Բարիզ—

Բարիզի Ուսանողական Ոստանին Հայկական Տան մէջ տեղի ունեցաւ հանդէս-երեկոյթ մը, Յունուար 7ին շաբաթ օր, հայկական Մնունդի առթիւ, նոյն Տան սրահին մէջ։ Ներկայ էին Տան տնօրէնը՝ Պ. Քամբէնքի և Տիկինը, Հ.Բ.Ը. Միութեան Եւրոպայի Կեդր. Յանձնաժողովի փոխ-ատենապետ Տօքթ. Ա. Պիւրիւքեան և անդամ Բրօֆ. Ն. Արփիարեան և Տիկինը, Յովհաննէս Պողոսեան, Բարիզի Մասնաժողովի անդամներէն Տիար Ա. Ֆրէնկեան, Տիար Պարէտ Բամպուքճեան և Տիկինը և ուրիշ հրաւիրեալներ։

Սրահը լեցուն էր հայ թէ օտար երկսեռ ուսանողներով, իրենց գլուխը ունենալով Տան ուսանողներու վարչութեան անդամները։ Գեղարուեստական բաժինէն յետոյ, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր, պարերը տեւեցին մինչեւ առաւօտ, չէնչող և ոգեւորիչ մթնոլորտի մը մէջ։ Այս առթիւ հիւրերը մեծարուեցան շամբանեայով և անուշեղէններով։

Ավինեոն—

Հ.Բ.Ը. Միութեան Ավինեոնի Մասնաճիւղը, նոր տարուոյ առթիւ սարքեց կաղանդի ծառի հանդէս մը «Թիւկպի Պար» ընդարձակ սրահին մէջ, ուր հաւաքուած էր Ավինեոնի ամբողջ հայութիւնը, ինչպէս նաեւ մօտակայ գիւղերէն եկած հայեր։

Դպրոցի աշակերտները իրենց ուսուցչին առաջնորդութեամբ ներդաշնակօրէն

երգեցին Բարեգործականի քայլերգը, որուն հետեւեցան հայերէն արտասանութիւններ տղոց կողմէ։ Տեղի ունեցան հայկական պարեր, մենարգներ և բեմադրուեցաւ կատակերգութիւն մը, Տեղւոյն հայ առեւտրականներուն կողմէ նուիրուած բազմաթիւ և արժէքաւոր առարկաներ վիճակահանութեան դրուեցան, որով բաւական գումար մը գոյացաւ ի նպաստ Միութեան։ Յետոյ ներկայ մանուկներէն իւրաքանչիւրը ստացաւ իբրեւ նուէր՝ մրգեղէնի և շաքարեղէնի ծրար մը։ Ներկաները երեկոյեան ուշ ատեն բաժնուեցան սրահէն, ուրախ և գոհարթ տրամադրութեամբ։

Մարսէյլ.—

Հ.Բ.Ը. Միութեան Մարսէյլի Մասնաճիւղը, Հայուհեաց Մասնախումբը և Երիտասարդները ըստ ծրագրի լրացուցին իրենց տարեկան գործունէութիւնը, իսկապէս շքեղ պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 17 ին, շաբաթ գիշեր, ժամը 21 էն մինչեւ արշալոյս, Օթել ըՍփլանտիտի սրահին մէջ։

Կը նախագահէր տեղական Մասնաժողովի Ատենապետ Տիար Վահագն Սահաթճեան, որ բացումը ըրաւ գեղարուեստական բաժնին, շնորհակալութիւն յայտնելով ներկայ ստուարաթիւ հանդիսականներուն, որ սիրայօժար պատասխանած էին իրենց ուղղուած հրաւէրին։

Տիկին Էլիզ Զրբաչեան, շնորհակալութեան սրտառուչ ուղերձէ մը վերջ, յայտնեց թէ՝ 1960 ի ամառը, երկու սեռէ հայ ուսանողներ Մարսէյլի համալսարաններու մէջ աւարտելով իրենց մասնագիտական ուսումները, արժանացած էին պետական վկայականներու, և յատկապէս հրաւիրուած էին այս հանդէսին, ընդունելու համար գաղութին ջերմ շնորհաւորութիւնները։ Տիկին Զրբաչեան վեր առաւ բացառիկ նշանակութիւնը հայ համալսարանական երիտասարդութեան արձանագրած այս յաջողութեան, որ կուգար պսակել իրենց երկար տարիներու տքնաջան աշխատութիւնները, և անոնց իմացական բարձր ձիրքերը, որ պատիւ կը բերէին հայ ցեղին։

Տիկին Զրբաչեան միեւնոյն ժամանակ շնորհաւորեց շրջանաւարտներուն ծնողքը, որ երբեմն ի գին զրկանքներու և ծանր զոհողութեանց, քաջալերած էին իրենց զաւակներու յառաջդիմական ձգտումներն ու ջանքերը, և այսօր արդար հպարտանքով կը վայելէին իրենց ծնողական պարտականութիւնները լրիւ կատարած ըլլալու քաղցրագոյն գոհունակութիւնը։ Այնուհետեւ, մի առ մի կարդացուեցան անունները օրուան հիւր համալսարանականներու, որոնք զատ զատ իրենց նստած տեղերէն վեր ելլելով, մի առ մի ծափահարուելէ վերջ, բեմ հրաւիրուեցան հաւաքաբար և արժանացան երկար ծափողջոյններու և խանդավառ «հուրրա»ներու։ Ուրիշ անակնկալ մը եւս կը սպասէր հանդիսականներուն։ Արդարեւ, Մարսէյլի հայութեան զաւակներէն Ռընէ Աթոյեան, շաբաթ մը առաջ, վարսերու գեղարուեստական յարդարումի միջազգային մրցումին խլած էր Աշխարհի առաջին ախոյեանութեան տիտղոսը, եւրոպացի և ամերիկացի բազմաթիւ մրցորդներու մէջ։ Նախագահ Տիար Սահաթճեան, իրեն յատուկ սրամիտ պերճաբանութեամբ ներկայացուց զայն հանդիսականներուն, տեղի տալով խանդավառ գնահատանքի ծափերու։

Գործադրուեցաւ գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը — երգ, մենարգ, պար, եւայլն — որուն յաջորդեց թոմպոլայի վիճակահանութիւն մը, որուն մեծարժէք նուէրները ցուցադրուած ըլլալով, դիւրացուցին տոմսերու վաճառումը։ Հանդէսը պսակուեցաւ նիւթական ու բարոյական մեծ յաջողութեամբ։ Գոյացած կոկիկ հասոյթը պիտի յատկացուի Բարեգործականի Մարսէյլի Մասնաժողովի հանրանպաստ ձեռնարկներուն։

Հ.Բ.Ը. Միութեան Նիւ-Եորքի Տիկնանց Կեդրոնական Յանձնախումբի Կրթական Ճիւղի հիմնադրութեան 25 րդ տարեդարձը տօնուեցաւ թէյասեղան - հանդէսով մը, Հոկտ. 21 ի երեկոյեան Ս. Խաչ Եկեղեցիին սրահին մէջ, հովանաւորութեամբ Ամերիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Սիոն Արք.ի։ Ընտիր բազմութեամբ մը լեցուած էր ամբողջ սրահը։

Հանդէսին բացումը կատարեց Կրթական Ճիւղի Ատենապետ Տիկին Զարուհի

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԽՕՍՔԸ

Վեցալից սրտով ես գուրգուրացի տարիներ այնքան,
Մեր որբերուն վրան եւ այրիներուն՝ հէ՛ք, թափառակա՛ն,
Սի՛րտ տուի անոնց, ձե՛ռք տուի անոնց որ բարձրանան վեր,
Եւ կեանքի փրոտ ճամբէն ելլեն լուրս, խալեն անվեհեր:

Ստանան նո՛ր կեանք, նո՛ր կորով, նո՛ր յոյս, ըլլան հայորդի,
Եւ հառագայթեն անունն ու հանճարն հայուն ամէն դի:
Սիրեն հայ տնակն ու եկեղեցին — հնաւա՛նդ անօր —
Եւ պսակեն բիւր նահատակներուն շիրիմն անծանօթ:

Ըլլան առ յաւէտ ծարաւի ուսմա՛ն, գիտութեա՛ն, լոյսի՛ն,
Բազմանան, լոյս տան զերթ երկնից փայլող աստղերն ու լուսին,
Ըլլան նո՛ր Վարդան, նո՛ր Սահակ, Մեսրոպ եւ Շնորհալի,
Երգեն հայութեան վերածնունդն անգին աւիւնով առլի:

Հայ եղբա՛ր, քոյրե՛ր, խալենք միտս յառաջ, ձեռք ձեռքի տուած,
Սէր եւ միութիւն, բարի գործ ու կեանք օրհնած է Աստուած.
Ցիտատակն անոնց որ հաստատեցին մեր Միութիւնն հոս,
Միայն մեր գործով պիտ՝ ըլլան բարեաց ակն առատահոս:

ՎԱՀԷ ՀԱՅԿ

Գազանճեան։ Օրուան պատչաճ ուղերձներ ըրին Վեր. Ա. Պետիկեան, ՊՊ. Միհրդատ Թիրեաքեան և Յակոբ Անտոնեան, որոնք՝ իւրաքանչիւրը իր տեսանկիւնէն դիտելով՝ գնահատեցին Բարեգործականի Տիկիններուն այս օգտակար գործունէութիւնը, սարքուած դատախօսական երեկոյթներուն հայապահպանման դերն ու արժէքը։ Շնորհաւորական զանազան նամակներու և հեռագիրներու ընթերցումէն յետոյ, Սիոն Սրբազան իր օրհնութեան խօսքերով թելադրեց Տիկիններուն որ ընդարձակեն կրթական-մշակութային գործունէութեան շրջանակը, նկատի ունենալով նոր սերունդին պահանջները։

Տիկին Նորմա Գազանճեան, երգեց Ես Սիրեցի, Անոր և ուրիշ երգեր։ Ապա պատուոյ սեղան բերուեցաւ 25 ամեակի կարկանդակը։ Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովին Նախագահ Պր. Երուանդ Մավեան պաշտօնապէս շնորհաւորելէ ետք Տիկնանց Կրթական Ճիւղի 25րդ տարեդարձը, կտրեց կարկանդակը։ Ներկաները հիւրասիրուեցան սուրճով և կարկանդակով։

ԴԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Դահիրէի Հ.Բ.Ը. Միութեան տարեկան Ընդհ. ժողովը գումարուեցաւ 23 Մարտ 1961ին, Հինգշաբթի երեկոյ ժամը, 8.30ին և ընտրեց իր նոր վարչութիւնը, որուն Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով.—

Տիարք Հայկազուն Քիւրքճեան, Ատենապետ
Հայկ Օհաննէսեան, փոխ-Ատենապետ
Գրիգոր Պասմաճեան, Ատենադպիր
Խաչիկ Ըէիսեան, Գանձապետ
Մարտիկ Թաթիկեան, Խորհրդական
Տիգրան Պապիկեան, »
Տոքթ. Դր. Տէր Գէորգեան »
Կարօ Ներէտեան, Հաշուեքննիչ

Ալեքսանդրիոյ Հ.Բ.Ը. Միութիւնն ալ 9 Ապրիլ 1961ին, Կիրակի առաւօտ, Միութեան ժամագրավայրին մէջ — Քան տը Սէզար — գումարեց տարեկան Ընդհ. ժողովը և ընտրեց նոր վարչութիւնը հետեւեալ ազգայիններէն.—

Տիարք Լեւոն Եղիազեան, Ատենապետ
Մկրտիչ Նալպանտեան, Ատենադպիր
Նուպար Գարկաեան, Գանձապետ
Խաչիկ Մազլումեան, Խորհրդական
Լեւոն Հիւրմիւզ, »
Նազարէթ Զամպաքեան, »
Արշաւիր Կէօնճեան, »

Երիտասարդական Շարժում.—

Դահիրէի Հ.Բ.Ը. Միութիւնը իր հետապնդած նպատակներէն կարեւորագոյնը կը նկատէ Երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան սատար հանդիսանալու պարագան և այս նպատակաւ ալ կազմակերպած է Երիտասարդաց Մշակութային Մարմինը՝ 1955էն իվեր։ Միութիւնը Երիտասարդական այս շարժումը կը քաջալերէ նիւթական ամէն տեսակ զոհողութեանց յանձնառու ըլլալով և կը կազմակերպէ հայագիտական դասախօսութիւններ, զբօսապտոյտներ, այլ և այլ հաւաքոյթներ — իսկ հետզհետէ ճոխացող իր ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ գրադարանը կը տրամադրէ ուսումնասէր երիտասարդութեան և բոլոր անդամ-անդամուհիներուն առհասարակ։ Եւ վերջապէս Ազգային և Կրօնական տօներու ինչպէս և զանազան պատեհութիւններով սարքուած թէյասեղանները կամ պաղպաղակասեղանները, գեղարուեստական կոկիկ յայտագիրներով համեմուած, Բարեգործականի մեծ ընտանիքին մաս կազմող այս ներուղը դաստիարակելու կը ձգտին և առիթը կուտան որ երկսեռ երիտասարդութիւնը զիրար լաւ ճանչնայ և վայելէ Բարեգործականի հովանիին տակ հայկական մաքուր և անխարդախ մթնոլորտի մը բարիքները։ Ուրախ ենք որ մեր երիտասարդ-երիտասարդուհիները կը գնահատեն իրենց համար մտահոգուող Միութեան զոհողութիւնները, և փոխադարձաբար կը ջանան արժեցնել զանոնք. իրենց կարգին կազմակերպելով զանազան ձեռնարկներ, որոնց առաջինը եղաւ Մարտ 5ին, ՆԱՑԼ ՀՈԼԻ մէջ տրուած հրապարակային հանդէսը, որ կը բաղկանար թատերական և գեղարուեստական բաժիններէ և որ արձանագրեց գնահատելի յաջողութիւն մը։ Այս առթիւ մասնաւորապէս կը չեշտենք մեր երիտասարդներուն և երիտասարդուհիներուն հանդէսը կարելի եղած յաջողութեամբ գլուխ հանելու մասին ցուցաբերած նախանձախնդրութիւնն ու աղնիւ ոգին։ Գեղարուեստական բաժինին իրենց բարեհաճ մասնակցութիւնը բերին Տիկին Ա. Թաշճեան՝ դաշնակի ընկ. Տիկին Շ. Ի. բէքեանի և Պ. Յակոբ Գասպարեան՝ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Ս. Նշանեանի, — ՄԵՆԵՐԳ — Օրիորդ Շողիկ Տատրեան և Պ. Տիգրան Տաքէսեան — ԴԱՇՆԱԿ — Օրիորդ Թերէզ Պարսոյեան և Պ. Վարուժան Պետրոսեան - ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ - և հաւաքոյթին առաջին մասը վերջ գտաւ Պ. Օննիկ Գալուստեանի «ԱՂԱԻՆՈՒ ՎԱՆՔԸ»ի շատ տպաւորիչ արտասանութեամբ։

Յայտագրին երկրորդ մասը սկսաւ անմահն Պարոնեանի «Արեւելեան Առասպելաբոյժը»ի բեմադրութեամբ, զոր ամփոփած և ներկայանալի թատերախաղի մը վերածած էր ողբացեալ Վահան Հայէչեան։ Դերակատարները՝ Օր. Թերէզ Պարսոյեան և ՊՊ. Խաչիկ Եաղըճեան, Վարուժան Պետրոսեան, Միքայէլ Ժամկոչեան, և Աւետիս Մինասեան իրենց լաւագոյնը ըրին թատերախաղին բեմադրութեան յաջողութիւնը ապահովելու համար։ Այս կատակերգութեան յաջորդեց Տօն Փիէթրո Քարուզզոի մէկ արարնոց ողբերգութիւնը, խաղարկութեամբ Օրիորդ Արշալոյս Տէր Պետրոսեանի, Պ. Շաւարշ Գա-

բանֆիլեանի և դերասան Սեդի Գօշունեանի որ կազմակերպիչն ու դերուսոյցն էր միաժամանակ այս թատերախաղին ինչպէս և «Արեւելեան Ատամնաբոյժ»ին։ Այս ողբերգութեան բեմադրութիւնն ալ յաջողութեամբ պսակուեցաւ և բոլոր դերակատարները արժանացան ներկաներու ջերմագին ծափերուն։

Լսարանի Հիմնարկութիւն.—

Ապրիլ 23ին, կէս օրէ վերջ ժամը 6ին, բազմաթիւ անդամներու և համակիրներու ներկայութեան, Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԻ Մարզադաշտին մէջ կատարուեցաւ Բարեգործականի ապագայ Տան համար վերապահուած գետնին վրայ Լսարանի մը հիմնարկութիւնը, որ պիտի ունենայ 11×18 մէթր տարածութիւն և պիտի ծառայէ որպէս ժողովատեղի և ձմեռնային հաւաքավայր, որ օժտուած պիտի ըլլայ նաեւ ճոխ զրադարանով մը։ Հիմնարկէքին ներկայ էին բացի Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԻ վարչութեան յարգելի անդամներէն, մեր Տիկնանց ժրաջան յանձնախումբը, որ այդ օրուան համար պատրաստած էր համադամ խմորեղէններ, որոնք զովացուցիչներով մեծարուեցան ներկայ հիւրերուն։ Լսարանի այս շէնքը կը կառուցուի Մարզարանի անդամներուն և համակիրներուն բացառիկ զոհողութիւններով. կը նախատեսուի շինութեանց և կահաւորման համար աւելի քան 2000 ոսկիի ծախք մը։ Արդարեւ գովելի և գնահատելի է Մարզարանի վարիչներուն և անդամներուն հայ երիտասարդութեան համար կատարած այս օրինակելի զոհաբերութիւնը։

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Հ.Ռ.Ը. Միութեան Հ.Մ.Ը.Մ.—ՆՈՒՊԱՐ Լսարանի։

Հռչակաւոր Երգահան եւ Հայ ժողովուրդի պարծանք Արամ Խաչատրեան մեր մէջ։

Ապրիլ 16 ին, կէս օրէ վերջ, ժամը 5.45 ին օդի ճամբով Գահիրէ ժամանեց Հայ ժողովուրդի պարծանք զաւակը Արամ Խաչատրեան իր շնորհալի Տիկնոջ հետ։ Բազմահազար հայեր և արուեստասէրներ հաւաքուած էին օդակայան՝ սիր Վարպետին ներկայութիւնը ողջունելու «Գարուն Երեւան» երգով և ծաղիկներու տարափով։ Բարի գալուստի եկած էին պետական օփերայի տնօրէն Պ. Նահաս, երաժշտագէտ Ապու Պաքր Խայրաթ, Գահիրէի Սէնֆոնիք Նուագախումբի վարիչ՝ Ժ. Զտրաքովիչ, պաշտօնական անձինք և մամուլի ներկայացուցիչներ։ Տէր և Տիկին Խաչատրեան իջեւանեցան Շէփբրդ պանդոկը և իրենց Եգիպտոս բնակութեան ընթացքին հիւրը եղան մեր բարեխնամ կառավարութեան։

Եգիպտոսի մէջ, Ա. Խաչատրեան տուաւ 4 նուագահանդէս, որոնցմէ մէկը ինքնաստ Գալուստեան Ազգ. Վրժ.ի։ Ապրիլ 21ին։ Ուրբաթ օր Շէփբրդ պանդոկին մէջ մեր լուսամիտ և մշակութասէր նախարարը՝ Պ. Սարուաթ Օքաշա, պատուոյ ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ Խաչատրեան ամոլին, որուն հրաւիրուած էին նաեւ արուեստի և մշակոյթի գործիչներ։ Ճաշկերոյթի ընթացքին յարգելի նախարարը յանուն Արաբական Միացեալ Հանրապետութեան կորովի նախագահ Կամալ Ապտել Նասէրի, Արամ Խաչատրեանի շնորհեց Նեղոսի Առաջին Կարգի Մանեակը, իսկ Երկրորդ Կարգինը՝ Գահիրէի Սէնֆոնիք Նուագախումբի վարիչ Ժ. Զտրաքովիչի։

Մայիս 2 ին, Հիլթըն պանդոկի մէջ, Ազգային Իշխանութեան եւ մեսկուբային մարմիններու նախաձեռնութեամբ և Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ տեղի ունեցաւ շքեղ ընդունելութիւն մը ի պատիւ Տէր և Տիկին Խաչատրեաններու։ Մասնակցեցան աւելի քան 500 ազգայիններ։ Գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր և ներկաներէն շատեր ունեցան յարգանքի և սքանչացումի ելոյթներ։

Գահիրէի հայ գաղութը գիտցաւ յարգել և պատուել Հայ անունը պանծացնող իր մեծանանձար աղգակիցը։

Արամ Խաչատրեան Բարեգործականի Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ մարզարանին մէջ.—

Ապրիլ 30 ին մեծ պատրաստութիւն կար Հ.Բ.Ը. Միութեան Հ.Մ.Ը.Մ-ՆՈՒՊԱՐ Մարզարանին մէջ։ Նոյն դիշերը մեր բազմաթիւ անդամներն ու բարեկամները ժամադրուած էին մեր մարզարանին մէջ, հոն ծանելու համար Մայիս 1ը և մանաւանդ ողջունելու, անգամ մը եւս մեր հանճարեղ ազգակիցը իր աննման տիկնոջը հետ, որոնց երաժշտական ելոյթները անմոռանալի

Ա. Խաչատրեան օրջապատուած մեր ժրաջան Տիկիններով եւ Օրիորդներով

պիտի մնան Եգիպտոսի մէջ։ Մարզարանը շատ կանուխէն լեցուած էր և սեղանները գրաւուած, երբ կէս գիշերը անց, Տէր և Տիկին Արամ Խաչատրեան և իր շքախումբը և այլ բարեկամներ, խանդավառ ծափերու մէջ մուտք գործեցին և առաջնորդուեցան պատուոյ սեղանը, գրաւելու համար իրենց վերապահուած տեղերը։ Մեծանուն Վարպետը, հազիւ աւարտած նոյն գիշերուան նուագահանդէսը փութացած էր, «հակառակ իր ակներեւ յոգնութեան-մեզի հետ ծանելու Աշխատանքի և Եղբայրու-



Տիկին Նինա Մաքարովնա Խաչատրեան

Տէր եւ Տիկին Արամ Խաչատրեաններ պատուոյ սեղանին

թեան Տօնը չէնչող, զուարթ և տրամադիր մասնակցելով գիշերային խրախճանքին իր բարեշնորհ կէսին հետ, որ միշտ հաճոյակատար, միշտ իր մեծութեանը մէջ համեստ սև խոնարհ, շրջապատուեցաւ մեր Տիկնանց Յանձնախումբի ժրաջան և անխոնջ Տիկիններով և Օրիորդներով, որոնք իրենց լաւագոյնը ըրին՝ անթերի սպասարկութեամբ և վայելուչ մեծարանքով պատուելու համար մեր թանկագին և սիրելի հիւրերը։ Ու բաժակները բարձրացան և կեցցէներու և սրտագին բարեմաղթութեանց մէջ, Տիկին Նինա Մաքարովա Խաչատրեան բարեհաճեցաւ երեկոյթի Առաջին պարը պարել Մարզարանի յարգելի Նախագահին՝ Պ. Պերճ Եագուպեանի հետ։ Ե՛ւ խրախճանք, և՛ ուրախութիւն, և՛ պար ու ծաղկազարդ ճոխ սեղաններու վայելք, մինչեւ առաւօտեան առաջին ժամերը ...

Ուրախ ենք որ մեր մեծանուն Հայրենակիցը՝ Խաչատրեան Ամոլը, Ազատ Եգիպտոսէն հետը տարաւ Մայիս Մէկի այս անմոռանալի հաղիսութեան քաղցր յիշատակը։

Այցելութիւն.—

Մայիս 17ին, հաճոյքն ունեցանք Բարեգործականի գրասենեակին մէջ ընդունելու Եւրոպայի Հ.Բ.Ը. Միութեան կեդր. Յանձնաժողովի անդամներէն և Բարիզի մեր Շինարար հանդէսի աշխատակիցներէն Տիար Հայկ Թօփաքեանի այցելութիւնը, որուն հետ ունեցանք Միութեան գործունէութեան մասին չանկեան տեսակցութիւն մը։ Տիար Թօփաքեան այցելեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-Նուպար մարզարանը, ընկերակցութեամբ մեր յարգարժան պաշտօնակից Տիար Վ. Գարտաշեանի և հանդիպում ունեցաւ նաեւ կեդրոնական Յանձնաժողովի Դիւանի յարգելի անդամներուն հետ։ Ս.Շ.

Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ սրահի հիմնարկութիւն

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Նիւ-Եորք.—

Պետրոս Մանուէլեան, Նիւ-Եորքի Ճորճ Վաշինկթըն բարձրագոյն վարժարանը այս տարի աւարտեց 909 աշակերտներու մէջ, առաջին հանդիսանալով. չհասած է 100 ի վրայ 97.3։

Այս առթիւ ստացած է 1700 տոլարի կրթաթոշակը, շարունակելու համար իր ուսումը Գոլէճի մէջ։ Ստացած է Անգլիական բաժինի և Ամերիկեան Լէգէոնի չքանչանները Ֆի, պէթա, կաբա սկզբնատառերը կրելու իրաւունք, որ կը շնորհուի բացառիկ յաջողութիւն արձանագրած աշակերտներու։ Ստացած է նաեւ յատուկ չքանչան սպանէրէնի համար։

Պետրոս Մանուէլեան մարզասէր երիտասարդ մըն է, և իր հարազատ լեզուն սորված է Նիւ-Եորքի Սուրբ Խաչ Վարժարանին մէջ, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ։

Հ.Բ.Ը. Միութեան Ուոթրթաունի Տաճարէջ Տիկին Վավա Խաչատուրեանի Ցուցահանդէսը.—

Անցեալ Հոկտ. 16 ին Հ.Բ.Ը. Միութեան Ուոթըրթաունի սեփական կեդրոնին մէջ, պաշտօնական բացումը կատարուեցաւ Տիկ. Վավա Խաչատուրեանի նկարներու ցուցահանդէսին, մեծ բազմութեան մը ներկայութեան։

Ցուցադրուած էին նկարչուհիին վրձինէն ելած աւելի քան 30 նկարներ, մեծ մասով իւղաներկ գործեր, ինչպէս նաեւ ջրաներկ և «կուաչ» պատկերներ։ Մասնաւորաբար աչքի կը զարնէին իր հայկական բնաշխարհի տեսարաններուն ու պատմական վայրերուն նկարները։ Այս ցուցահանդէսը որ տեւեց մինչեւ ամսուն վերջը, երկրորդն էր որ տեղի ունեցաւ Հ. Բ. Ը. Միութեան շէնքին մէջ, իբրև մշակութային ձեռնարկ։

Քանատա, Թորանթօ.—

Տիկին Պապաեանի նուէրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Թորանթօ այցելութեան առթիւ, Տիկին Բերուշ Պապաեան, ըստ հայրենական աւանդութեան, ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ Վեհ. Հայրապետին իր Արմաւիր ապարանքին մէջ. Արեւելեան ճաշակով կահաւորուած սրահներէն մէկուն մէջ, Վեհին ուշադրութիւնը գրաւեց ի մէջ այլոց, Այվազովսկիի երկու իւղանկարները։

Նոյն գիշերն իսկ Ռոյըլ Եորքի պանդոկին մէջ, ազգային մեծ ճաշկերոյթին՝ խօսնակը յայտարարեց, ի ներկայութեան պետական և զանազան եկեղեցիներու ներկայացուցիչներու, թէ Տիկին Պապաեան Ս. Էջմիածնի կը նուիրէ Այվազովսկիի երկու թանկարժէք նկարները, և հրաւիրեց ազնիւ Տիկինը որ անձամբ յանձնէ զանոնք Վեհափառին։

Տիկին Պապաեան, յուզումով և երկիւղածութեամբ մօտեցաւ Վեհափառին, ըսելով.

— Այս նուէրը կ'ընեմ ոչ թէ իմ՝ այլ Թորոնթոյի հայութեան կողմէ, ու երբեք չէի կրնար երեւակայել թէ օր մը պիտի արժանանամ այս երջանիկ օրուան, ու մեծ պատիւին, իմ ձեռքովս իսկ Ամենայն Հայոց Հայրապետին նուիրելու այս նկարները, որպէսզի անոնք գրաւեն իրենց արժանի տեղը Ս. Էջմիածնայ Վեհարանին մէջ։

Հ. Բ. Ը. Միութեան Թորանթոյի մասնաճիւղը երախտագիտութեամբ կ'արձանագրէ Տիկին Պապաեանի ազգասիրական ոգին։

Հարաւային Ամերիկա.—

Պուէնոս Այրէսի Ապրիլեան Ցուշարձանին հիմնարկէքը

Ինչպէս ծանօթ է Պուէնոս Այրէսի Հայոց Մայր Եկեղեցիի բակին մէջ կը բարձրանայ Ապրիլեան Նահատակներուն նուիրուած յուշարձանը։ Բացումը տեղի ունեցած է արդէն։ Ապրիլեան սերունդի ներկայացուցիչներ՝ Օր. Սիրանոյշ և Պ. Պօղոս Արզումանեան հարազատներու ծախքերով կառուցուած է այս յուշարձանը։

Ֆրանսա.—

Ֆրանսական բեմին վրայ 1960 ի ընթացքին փայլեցան հետեւեալ հայ դերասանները.—

— Ռոզ Վարդ, որուն իւրաքանչիւր խաղարկութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ։

— Ռէյմոն-Հերմանդիէ-Մարութեան,

— Արամ Ստեփան,

— Էտմոն Թամիզեան, մրցանակի արժանացած,

— Ժան Ժագ Ալան,

— Ճանիկ-Ճանիկեան և ուրիշներ։

Բոլորն ալ ցոյց տուին իրենց անժըխտելի տաղանդը։

Արաբական Միացեալ Հանրապետութիւն.—

Հալէպի հայ ծերանոցին մէջ կեդրոնական ջեռուցման հաստատումին և տառնարան սենեակի մը համար, Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը 21 հազար տոլար յատկացուցած է։

Միւս կողմէ, նոյնպէս 20 հազար տոլարի նուիրատուութիւն մը պիտի կատարէ Կիւլպէնկեան Հաստատութիւնը։

Լիբանան.—

Անուանի գրագէտ Հրաչեայ Քոչար Պէյրութի մէջ.

Տաղանդաւոր և անուանի գրագէտ ու արձակագիր Հրաչեայ Քոչար, 22 Յունուար 1961, Երկուշաբթի օր Պաղտատէն գալով Պէյրութ ժամանեց, և կայարանին մէջ դիմաւորուեցաւ Պէյրութահայ գրասէրներու և մտաւորականներու կողմէ։

Հրաչեայ Քոչար ծնած է Ալաչկերտի — Բագրեւանդ — Ղումլու-Պուճախ գիւղը։ 1915 ի ջարդերու ատեն կորսնցուցած է հայր, մայր, եղբայրներ և քոյրեր։ Ապրած է հայ ժողովուրդի տառապանքը, ինքզինքը նետած է Հայաստան և հոն հասակ նետած։ Տարիներով, Հրաչեայ Քոչար եղած է սեւագործ բանուոր, դառնալու համար այսօրուան վաւերական գրագէտ-արձակագիրը, որուն անունը բարձր կը հնչէ այսօր Հայաստանի սահմաններէն ալ անդին։ Հրաչեայ Քոչար նախապէս գրած է վիպակներ, պատմուածքներ, նշանաւոր են ռազմաճակատէն ղրկած թղթակցութիւնները։ Իսկ իր ամենէն արժեքաւոր գործն է Մեծ Տան Զաւակները, որ տասնեւչորս տարիներու աշխատանքի արդիւնք է։

Մեծ գրագէտին շրջապտոյտը Լիբանանի մէջ, մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ։ Այցելեց հայ վարժարանները — Ցով-Մանուկեան, Սահակեան, Դարուհի Յակոբեան, Սահակ-Մեսրոպեան, Ռուբինեան, Տեմիրճեան վարժարանները, և Փալանճեան Ճեմարանը, ոգեւորելով ուսանողներուն դը, յուզելով և յուզուելով։

Անուանի հիւրը մամլոյ ասուլիս մը տուաւ հայ և արաբ թղթակիցներու։ Այցելեց լիբանանահայ թերթերու խմբագրատուները և զրոյցներ ունեցաւ անոնց խմբագիրներուն և աշխատակիցներուն հետ։

Հրաչեայ Քոչար հանդիպումներ ունեցաւ Լիբանանահայ Վերածնունդ Միութեան, Շիրակ ամսագրի, Նայիրի գրական շաբաթաթերթի, Գրական Շրջանակի, Նոր Սերունդ Մշակութային Շարժումի անդամներուն և անոնց համակիրներուն հետ։ Խօսեցաւ Թէքէեան Մշակութային տան մէջ, հսկայ բազմութեան մը ներկայութեան։

Քոչար անջնջելի տպաւորութիւն մը ձգեց հայրենակարօտ մեր ժողովուրդին վրայ, և շաբթուան մը տենդոտ ու անխոնջ վազքէ մը ետք, մեկնեցաւ Հայրենիք, մեզի ժառանգ ձգելով ոտ հոգեբուխ ու իմաստալից խօսքը.—

«Հեռու ենք իրարից աշխարհագրականօրէն, բայց միասին ենք հոգով»։

Երիտասարդ Զուրգանար Վարուժան Գոճեանի յաղթանակը.—

Խելայեղ ընդունելութեան մը արժանացաւ Վարուժան Թէաթրը տիւ Լիպանի մէջ, Երեքշաբթի, 7 Մարտին։ Այս նուագահանդէսը եկաւ հաստատելու անգամ մը եւս անոր հրաշալի տաղանդը։ Բացառիկ արժէք մը միայն հ՛արժանանայ հասարակութեան խանդավառութեան։ Անկասկած, Վարուժան վիրթիւոզ մըն է, բայց ինչ որ հաղուագիւտ է, նոյն այդ վիրթիւոզին մօտ գտնելն է գերազանց թէքնիք մը և ա՛յնքան խոր երաժշտականութիւն մը։ Ի՜նչ աղնուական և անբիծ ոճ։ Ամէն ինչ իր

մեծ յատակ է, հաւասարակշռուած, խոհա-
կան։ Բայց խանդաղատանքի մասերն ալ
խոր քաղցրութիւն մը կը կրեն։ Իր աղեղը
ծայրայեղօրէն փայլուն է, կը կախարդէ իր
խանդով, բայց ատիկա արգելք մը չէ, որ
ան ըլլայ շատ զգայուն երաժիշտ մը։ Իր
այս առաւելութիւնը կը պարտի անշուշտ
իր ուսուցչին՝ Կամալեանին, որ մեզի կը
ղրկէ Վարուժան մը՝ հասունցած, տէրը՝ իր
արուեստին և որուն անհատականութիւնը
չեշտուած է գեղեցիկ վստահութեամբ մը։
Զայքովսքիի քոնչերթոն նուագեց զմայլելի
ճշգրտութեամբ մը, առանց բան մը զոհե-
լու անոր դիտարժան գործադրութենէն։ Ա-
զեղի տիրապետութիւնը, մատներու ճկու-
նութիւնը, յուզումի զսպուած ուժգնու-
թիւնը և փայլուն վերջաւորութիւնը խոր
տպաւորութիւն գործեցին հասարակութեան
վրայ, որ թնդացուց սրահը խանդավառ
«պրաւօ»ներով։

Զայքովսքիի յաջորդեց Շոսոնը, որ ան-
գամ մը եւս երեւան հանեց ջութակահարին
այքառու առաւելութիւնները։ Ռավելի
նշանաւոր ծիկանը ռեսիթալին հրախաղը
եղաւ։ Անոր մեկնաբանութիւնը ամէն տե-
սակէտով կատարեալ էր, շնորհիւ թէքնիքի
տոկունութեան և խաղին փայլուն ամբող-
ջութեան։ Այս կտորին մէջ, որ Ռավելի
դժուարագոյն և փչոտ գործերէն մէկն է,
Վարուժան կրցաւ երեւան բերել անոր փա-
ղաքշական բոլոր երանգները, հակառակ իր
ջութակին տնբաւարարութեան։ Շոսոնի և
Ռավելի միջև «Այշէի Պարը», Խաչատուր-
եանի մէկ պզտիկ գրաւիչ կտորը, ֆոլքլո-
րին ներշնչումով, հանգիստի պահ մը եղաւ։
Հասարակութեան խելայեղ ծափերուն առ-
ջեւ տեղի տալով Վարուժան նուագեց Սա-
րասատի «Ցիկոյներվայզեն»ը, որ ունկընդ-
րուեցաւ երկիւղած լռութեան մէջ։ Իսկ
Շոփենի «Նոքթիւռն»ը նուագուեցաւ իրա-
կան բանաստեղծի մը կողմէ, որ գիտէ իր
անձին իշխել։

Ցառաջիկայ Ցունիսին, Գալուստ Կիւլ-
պէնկեան Հիմնարկութեան հրաւէրով, ուր-
կէ կրթաթոշակ մը ստացաւ Միացեալ Նա-
հանգներ երթալու համար, Վարուժանը Լի-
բանանը պիտի ներկայացնէ՝ իբր մենանուա-
գող՝ Կիւլպէնկեան Փառատօնին, նուագելով
երկու նուագահանդէսներու, մէկը Լիզպոն,
միւսը՝ Օփորթօ։ Ամփոփուած «ԱՑԳ»էն

Պէյրութ — Ցոբելինական Հանդիսութիւն
Թրքահայոց Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին
Խաչատուրեանի նուիրուած։—

1960 Դեկտ. 11ին, Կիրակի կ.վ. ժամը
4ին, Ցովակիմեան-Մանուկեան Վարժարանի
Գալուստ Կիւլպէնկեան հանդիսասրահին
մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան,
տեղի ունեցաւ Ամենապատիւ Տ. Գարեգին
Պատրիարք Խաչատուրեանի Ցոբելինական
հանդէսը՝ անոր ծննդեան ութսունամեակին
առիթով։

Հանդիսութեան յայտագիրը, որ պատ-
րաստուած էր Պէյրութահայ Մշակութային
Միութիւններու կողմէ, վարեց Կիլիկիոյ
Աթոռի Օրինապահ Միաբանութեան անդամ
Հոգեշնորհ Գէորգ Վրդ. Կարպիսեան, որուն
բացման խօսքին յաջորդեց Հայ Երգիչնե-
րու Անսամպլը որ յաջողութեամբ երգեց
Էջմիածին ի Հօրէ չարականը, ինչպէս նաև
Հայրապետական Մաղթանքը, ղեկավարու-
թեամբ Տոքթ. Ի. Էլմաճեանի։

Այս երկու երգերն ալ յոտնկայս և եր-
կիւղածութեամբ ունկնդրուեցան ներկաներ-
ուն կողմէ։

Վեհափառ Հայրապետին որբատուն կոն-
դակը՝ Ամեն. Գարեգին Պատրիարքի Ցոբել-
եանի առնչութեամբ, կարդացուեցաւ Հոգշ.
Գիւտ Վրդ. Նագգաշեանի կողմէ։

Տիկին Մ. Էրվանեան արտասանեց Ցո-
բելեար Պատրիարքին ստեղծագործութիւն-
ներէն՝ Տաճաղի Քնարը։

Գերշ. Գնէլ Եպիս. Ճէրէճեան հանգա-
մանօրէն և յաջողապէս ներկայացուց
Գարեգին Սրբազանին կեանքն ու գործը,
հիացումի և յարգանքի զեղուն բառերով։

Տիկին Ա. Գուլյումճեանի մեներգէն
ետք, խօսեցաւ բանաստեղծ Վահէ-Վահեան,
Ցոբելեար Սրբազանին գրական վաստակը
պարզելով։ Պր. Ս. Մինասեան յատակ առա-
գանութեամբ արտասանեց Գարեգին Պատ-
րիարքինստեղծագործութիւններէն՝ «Բար-
ձունքն ի Վեր»ը։ Տիկին Ա. Այթունեան՝
մեներ գով, Պր. Ս. Իմմիեան, Տիկ. Զ. Պուճի-
քանեան և Օր. Ռ. Ժամկոչեան դաշնակով,
հանդէսին փայլը աւելցուցին։

— Վերջապէս բեմ բարձրացաւ Բարձրա-
շնորհ Խաչ Ս. Արքեպիսկոպոս իբր Նախա-
գահ օրուայ հանդիսութեան։ Սրբազան

պարզեց իր յուշերը և տպաւորութիւնները՝ Գարեգին Պատրիարքի մասին, մօտէն ճանչցած ըլլալով զայն, և կոչելով Սրբազան Ցոբելեարը՝ ներկայ հայ կղերականութեան գագաթներէն մին։

Հանդէսը փակուեցաւ Նախագահ Սրբազանին Պանպանիչով։

Մահ՝ Հայր Պողոս Ծ. Վրդ. Արիսի,

Վեթերան Անդամ Հ.Բ.Ը. Միութեան.—

1961 Ցունվ. 24 ին Երեքշաբթի օր, ժամը կ.ա. 1.30 ին, երկարատեւ հիւանդութենէ մը ետք, Օթէլ Տիէօ հիւանդանոցին մէջ, իր մահկանացուն կնքեց Պէյրութի Պուրճ-Համմուտ թաղամասի Բաղաքապետութեան Նախագահ և Զմմառի Միաբանութեան նախկին Մեծաւոր Հայր Պողոս Ծ. Վրդ. Արիս։

Եկեղեցական կարգը կատարուեցաւ Հինգշաբթի առաւօտ, 26 Ցունուար, որմէ վերջ մարմինը փոխադրուեցաւ Զմմառի վանքը, ուր տեղի ունեցաւ թաղումը։

Հայր Պողոս Արիսի կեանքն ու գործունէութիւնը սերտօրէն կապուած է Լիբանանահայ պատմութեան հետ։ Հայ գաղթականութեան առաջին կարաւաններուն ժամանումին հետ, հանգուցեալը տարած է գործօն և դրական աշխատանք, իբր Խնամանատարական Մարմնի վարիչ դէմք, իբր հոգեւորական և արարերէն լեզուի քաջածանօթ անձնաւորութիւն մը։ Իր հանրային գործունէութեան բեղուն շրջանը հանդիսացաւ վերջին տասնամեակը։ Իր նախագահութեան օրով էր, որ Պուրճ-Համմուտի հայաշատ կեդրոնը զարգացաւ շինարարական այլազան ձեռնարկներով։

Հայր Պողոս Արիս մեծ ծրագիրներու մարդը եղած էր։ Ինք հիմնեց Պուրճ-Համմուտի Որբանոցը, Մեսրոպեան Վարժարանը, «Մասիս» շաբաթաթերթը, Սուրբ Պողոս Երկրորդական Ճեմարանը, եւն.։

Ան Վեթերան անդամ էր Հ.Բ.Ը. Միութեան և մինչեւ վերջ կատարեց իր անդամական պարտականութիւնները, գնահատելով այս Միութեան ազգօգուտ դերը։

Հայր Պողոս Արիս ծնած էր Հալէպ, 1888 ին։ Կրօնական ուսումը ստացած էր Պոլսոյ Սեն Լուի Կղերանոցին և Զմմառի Ընծայարանին մէջ։ Քահանայ ձեռնադրուած էր 1912 ին։ Իբր ժողովրդապետ պաշտօնավարած էր Հալէպ և Պէյրութ։ Եղած էր հիմնադիրն ու Վարիչը Էյրէֆիէի Հայ Կաթողիկէ Որբանոցին, 1924—1935։ Պուրճ-Համմուտի Բաղաքապետութեան Նախագահութիւնը վարած էր 1953—1961։ Պարգեւատրուած էր Լիբանանեան Մայրիի շքանշանով՝ 1960 ին։

Ցարգանք իր խնկելի յիշատակին։

Ա.

Կիպրոս.—

Մշակութային Հանդէս Մելգոնեան Կրթական Հաստատութենէն։—

Հ.Մ.Ը.Մ.ի Մելգոնեան Կրթական Հաստատութեան Սանուց Մասնաճիւղը գրական-գեղարուեստական հանդէս մը տուաւ աշակերտութեան՝ Շաբաթ, 10 Դեկտ. կ.ե. ժամը 8 ին Հաստատութեան հանդիսասրահին մէջ։ Հանդէսը նուիրուած էր Մայր Հայրենիքի գրական և գեղարուեստական վերելքին ներկայացման՝ արտասանութիւններով, երգերով և արտայայտութիւններով։ Պր. Ց. Բամպակեանի բացման քանի մը խօսքերէն ետք, կը գործադրուի կոկիկ յայտագիր մը՝ արտասանութիւններու, մեներգներու և խմբերգներու։

Ալենոյշ Պալեանի Հայրենիքի և Հողին ուղղուած գրութեան մը ընթերցումէն ետք, Գոհարիկ Խոստեղեան կ'արտասանէ «Իմ Անոյշ Հայաստան» քերթուածը՝ Ազատ Վըշտունիէ, իսկ Աստատուր Տէօվլէթեան «Երեւանի Զայնը» (Ս. Կապուտիկեան) և Լեւոն Թընկըրեան՝ «Երգ Երգոցը» (Գ. Էմին)։ Մեներգներէն՝ «Հէյ Զան Արաղը» կ'երգէ Վիկթորիա Զօլագեան, «Զան Հայրենիքը»՝ Էլիզապէթ Թաշճեան, «Աղջկայ Երգը»՝ Հրոիփսիմէ Հայրապետեան, իսկ «Որքան Ցանկացայ»՝ Թագուհի Բարսեղեան։ Հաստատութեան երգչախումբը՝ զեկավարութեամբ Պր. Մ. Աբգարեանի, յաջորդաբար կ'երգէ «Հայրենիք»ը (Ալիքսանեան). «Մինչեւնակ»ը (Զ. Գոզալեան), և «Ես իմ Անոյշ Հայաստանը» (Ա. Սաթեան)։

Օրուան խօսողն էր վարժարանին ուսուցիչնեմէն Տիար Ն. Ցովհաննէսեան, որ արտայայտուեցաւ Հայրենի Հողը եւ Հայ

ժողովուրդը նիւթին չուրջ, ծանրանալով մասնաւորապէս Հայրենիքի փառապանծ 40 ամեակին և անոր վերելքին՝ ամէն մարզէ ներու Հպանցիկ ակնարկ մը նետելով անցեալին վրայ, ան հասաւ ներկայ օրերուն և վեր առաւ այն չինարարական գործը, որ յառաջ կը տարուի ներկայ Հայաստանի մէջ, մեր քոյրերուն և եղբայրներուն կողմէ, գործեր որոնք ամէն օր առտսպելական յառաջդիմութիւններ կ՝արձանագրեն և կեանք կուտան մեր հողերուն։

Փակման խօսքը ըրաւ Հաստատութեան Տնօրէն Պր. Ս. Գալուստեան, որ գոհունակութիւն յայտնեց հայրենի հողին վրայ կատարուած չինարարական գործերուն համար։

Հայրենական երգերու, արտասանութեանց և խօսքերու ժամ մըն էր, զոր վայելեցին աշակերտները և հազորդակից եղան վերելքի այն խանդին, որմով տոգորուած են Հայրենիքի լուսապայծառ վերագարթօնքը կերտող մեր հարազատները։

Ամենապատիւ Տ. Գարեգին Արք. Խաչատուրեանի ծննդեան 80 ամեակի տօնակատարութիւնը։

Կիրակի, 22 Յունվ. 1961 առաւօտեան ժամը 10.30 ին, Նիկոսիոյ Սինեմա Փալատի մէջ, 1000 է աւելի հայրենակիցներ, իրենց ներկայութեամբը մասնակից կը դառնային այն երախտագիտական զգացումին, զոր արտայայտել կը փորձէին Յոբելինական հանդիսութեամբ մը, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, Նիկոսիոյ Հայկ. Ակումբը, Հայուհեաց Միութիւնը և Հ. Բ. Ը. Միութեան Արանց և Տիկնանց զոյգ Վարչութիւնները։

Հոգեշնորհ Գիւտ Վրդ. Նագգաշեանի բացման խօսքէն և Ամենայն Հայոց Ազգընտիր Հայրապետ Ն.Ս Օ.Տ.Տ. Վազգէն Ա.ի սրբատառ Կոնդակի ընթերցումէն վերջ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան երգչախումբը անցաւ յայտագրի գեղարուեստական մասի գործադրութեան, երգելով Էջմիածին ի Հօրէ շարականը և Ամէն Հայի Սրտից բխած հայրապետական մաղթանքը։

Պր. Ս. Գալատեանի երգեց «Աստծոյն» (Վ. Պէտէլեանի) իսկ Հաստատութեան երգչախումբը երգեց դարձեալ ղեկավարութեամբ Պր. Ս. Աբգարեանի, յաջորդաբար և յաջողութեամբ Տաղ Ս. Մեսրոպայ, Ով Զարմանալի, Ով Մեծասքանչ և Խօսք Իմ Որդուն։ Մելինէ Գանթարճեանը զգացումով արտասանեց Յոբելեարին Լուսաւորչի Աչը, իսկ Պր. Ա. Գալայճեան կարդաց անոր Խաղաղութեան Զայնն Հնչեցաւ գրութիւնը։

80 ամեայ Յոբելեարին բեղուն կեանքի մասին ընթերցում մը ըրաւ Սերոբ Պապուճեան։ Օրուան գլխաւոր խօսողն էր ծանօթ խմբագրուհի և գրագիտուհի Տիկին Սեզա, որ Պէյրութէն յատկապէս հրաւիրուած էր բանախօսելու և հանգամանօրէն ներկայացնելու Ամենապատիւ Տ. Գարեգին Արք. Խաչատուրեանի Գրական Վաստակը։

Տիկին Սեզա բուն նիւթին անցնելէ առաջ, ըրաւ ընթերցումը այն նամակին, զոր Գարեգին Պատրիարք գրած էր Խաղ Սրբազանին՝ Պէյրութ։ Արագ բայց համապարփակ ակնարկով մը յարգելի բանախօսուհին այցելեց բոլոր այն վայրերը, որոնք գրական աղբիւրներ եղած էին ներշնչումի և գործունէութեանց՝ վերջին 60 տարիներուն։ Կը հանդիպինք Ամենապատիւ Յոբելեարին քիչ մը ամենուրեք, նոր ուսումնասիրութիւններով և նոր հրատարակութիւններով. Տարօնաշունչ, Աշխարհի Լոյսն ի Հայս, Նարեկի աշխարհաբար թարգմանութիւնը, եւայլն։ Ուր որ գըտնուեցաւ, միշտ ալ խօսեցաւ։ գրեց և գործեց իր ազգին համար։ Կրնա՞ր ծոյլ և անտարբեր մնալ, երբ ինքն իր վրայ կը կրէր այն չուանն ու հոգին, զորս իրեն փոխանցած էին Ալիշան, Օրմանեան և Դուրեան սրբազանները, Վենետիկէն և Արմաշէն սկսեալ։ Մտաւորական, հայրենասէր և ազգասէր, ստեղծագործեց ան իր հայ եղբայրներուն համար, քառասմբակ ուրացումներու, ուծացումներու դէմ՝ մեր նախնիքներու մեզի փոխանցելի աւանդը անվթար պահելու բարի նպատակաւ։ Հապա իր Ս. Խաչ Դպրեվանքն ու «Շողակաթ» ամսաթերթը, որոնք կ՝ամբողջացնեն հաւատարմութեան և ծառայութեան անսանձելի իղձերով և հուրով հոգեւորականը։

Տիկին Սեզա երկար և բարգաւաճ

կեանք մաղթեց Սրբազան Պատրիարք Հօր և յուսաց որ ան տեսնէ իր հասցուցած հունձքը որ կը կատարէ արդէն ազգասիրական, հայրենասիրական և հոգեւոր գործ՝ իրեն օրինակին հետեւելով։

Փակման խօսքին մէջ, Պր. Մ. Գալուստեան, մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Կիպրոսի Հանրապետական Կառավարութեան և անոր Նախագահ Մակարիոս Սրբազանին, և ըսաւ թէ ան մեծապէս ըզգացուած է այս Ցոբելինական Հանդիսութեամբ, որ իրաւ և անկեղծ արտայայտութիւնն է Կիպրահայութեան՝ հանդէպ մտքի և խղճի անվհատ և անվրդով զգաթի մը, որ է Գարեգին Պատրիարքը։

Պր. Պէրպէրեան Կարգադիր Ցանձնախումբին ղրկած բարեմաղթութեան և սրեւշատութեան հեռագիրները կարդաց և յայտարարեց թէ սրտաբուխ նուիրատուութիւններէ արդէն իսկ գոյացած է կոկիկ գումար մը, որով կը յառաջադրուի Ցոբելեար Սրբազանին անտիպ մէկ երկը հրատարակել Կիպրահայերու անունով։

Հոգեշնորհ Գիւտ վարդապետի օրհնութեամբ և երգչախումբի կողմէ երգուած Տէր կեցո՛ մաղթերգով վերջ գտաւ այս ցոբելինական հանդէսը։

Մելգոնեան Կրթական Հիմնարկութիւնը Կիպրոսի Ծրգի եւ Պարի Ֆեսթիվալին Առաջնութիւնը կը ստանի։

Երեքշաբթի, 13 Դեկտ., կ.ե. ժամը 2, 40 ին Տիքելիոյ (Լառնաքայի մօտ) դպրոցի մարզասրահին մէջ տեղի ունեցաւ միջ-համայնքային Առաջին Ֆեսթիվալը՝ ազգային երգերու և պարերու։ Կը մասնակցէին դպրոցական խումբեր հայկական, անգլիական, յունական և Թրքական համայնքներէն։ Ֆեսթիվալը կը հովանաւորէր զինուորական խարիսխի ներկայացուցիչ-հրամանատարը, իր հետ ունենալով այլ բարձրաստիճան հիւրեր, և մասնակցող վարժարաններու տնօրէններ և ուսուցիչներ։ Բազմահարիւր աշակերտներ և հանդիսականներ լեցուցած էին սրահը։

Հայ համայնքը ներկայացնելու բարձր պարտականութիւնը վստահուած էր Մելգոնեան Կրթական Հաստատութեան (երգչախումբով և պարախումբով) որ ունեցաւ յայտագրին առաջին ելոյթները՝ խմբերգներ և հայկական պարեր, որոնք այնքան խնամքով և բծախնդրութեամբ պատրաստուած էին Պր. Թ. Աբգարեանի կողմէ։ Յայտագրին ամբողջ տեւողութեան հանդիսականներ, բուռն ոգեւորութեամբ ունկընդրեցին հայկական երգերը և դիտեցին մեծ վայելքով հեզաճկուն պարերը հայ աղջիկներուն, որոնք յաջողութեամբ պարեցին՝ հարսանեկան պարեր և «Սարերի Հովին Մեռնեմ»ը։

Երգչախումբը՝ յաջորդաբար և մեծ ինքնավստահութեամբ երգեց Բ. Կանաչեանի «Նէնէնիր Նայը», Ա. Ալթունեանի «Մարալ Մարալ»ը, «Թոյ Նարկիզ»ը, «Հինգալլա»ն, և «Ֆորկա Ֆորկա»ն, Աշոտ Սաթեանի «Լուռ Գնացը» և Ջ. Գոզալեանի «Միծեռնակ»ն ու «Երգ Բարեկամութեան»ը. խումբին մենեղգիչն էր Օր. Ա. Գալուստեանը։

Ներկաները մեծապէս տպաւորուեցան Հաստատութեան ներկայացուցած երգերով և պարերով և Ֆեսթիվալին վարիչները մեծ գովեստով արտայայտուեցան խումբին կարողութեանը մասին և շնորհաւորեցին անոր առաջնորդը՝ Պր. Ա. Աբգարեանը, որ բարձր պահեց հայու անունն ու Մելգոնեանը և Հաստատութեան շահեցուց Ֆեսթիվալին առաջնութիւնը։

Մելգոնեանէն վերջ, Այոս Նիքոլաոսի նախակրթարանի աշակերտները, որոնք անգլիական բանակայիններու զաւակներ են, ինչպէս նաեւ Լառնաքայի Ամերիկեան Աքատէմիի յոյն աշակերտները, Թրքական վարժարաններու աշակերտները և Տիքելիոյ Ռինկ Ռիչըրտ դպրոցի աշակերտները հրամցուցին ներկաներուն յունարէն, Թրքերէն և անգլերէն երգեր ու ժողովրդական պարեր։

Խանդավառիչ երեւոյթ մըն էր այս Ֆեսթիվալը, որ յաջողած էր քով քովի բերել տարբեր համայնքներէ խումբեր և տալ գեղարուեստական վայելք՝ ներկաներուն։

Մասնաւոր գնահատանքի և շնորհակալութեան արժանի են Նիկոսիոյ Հ.Բ.Ը. Միութեան Տիկնանցի վարիչներն ու անդամները որոնք Հաստատութեան պարախումբին համար օրերով աշխատեցան և պատրաստեցին հայկական տարազներ, որոնք հանդիսականներուն հիացում պատճառեցին։

ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

Նոր Կիլիկիոյ Աւանը.—

Հաղիւ 10 տարի կայ որ 500 տունէ բաղկացեալ այս փոքրիկ աւանը հիմնուեցաւ Կիլիկեցի գաղթականներու միջոցաւ. ան կը գտնուի Երեւանի հարաւային արեւմըտեան կողմը, Հրազդանի ալ ափին վրայ, Միծեռնաբերդ կոչուած բլուրին ստորոտը։

Իւրաքանչիւր ընտանիքի յատկացուած տունը քարաշէն է և շրջապատուած պտղատու ծառերով մշակուած պարտէզով մը։ Շէնքերը ունին ամէն յարմարութիւն և մեծ մասով, օժտուած են ձայնասփիւռով և հեռատեսիլով։ Բնակիչները ընդհանրապէս Երեւանի մէջ կ'աշխատին, և բարեկեցիկ են։

Նոր Կիլիկիան ունի լայն և մաքուր փողոցներ, շատ արդիական դարմանատուն մը — Բոլիքլինիք — քանի մը սննդամթերքի վաճառատուն, և 250 հոգի բովանդակող Սինէմա-Թատրոն մը, ուր կարելի է նաեւ երաժշտական ելոյթներ և նուագահանդէսներ կազմակերպել։

— Երեւան մայրաքաղաքին Աբովեան փողոցին վրայ կը բարձրանայ նոր շէնք մը, որ ունի նախասրահներ և դահլիճներ։ Իւրաքանչիւր սրահ լի է նկարներով և արձաններով կամ քանդակներով։ Այդ նոր շէնքը սեփական տունն է Հայաստանի Նկարիչներուն և Քանդակագործներուն։

— Արեւելագէտ Յովսէփ Օրբելի այլքերը փակեց 74 տարեկանին։ Ուսումնասիրած էր Անդրկովկասի և Փոքր Ասիոյ ժողովուրդներուն մշակոյթի պատմութիւնը։ Յաջողած էր կազմել Արեւելքի և Արեւմուտքի քաղաքակրթական յարաբերութեանց համայնապատկերը։ Փաստած է թէ Արեւելքի ժողովուրդները ստատր հանդիսացած են ընդհանուր մարդկութեան յառաջդիմութեան։

Յովսէփ Օրբելի անդամ էր Հայաստանի Գիտութեանց Ակադեմիային։

— Եօթնամեակի ընթացքին, Երեւանի մօտ՝ Հրազդան գետին եզերքը պիտի կառուցուի արդիական նոր մարզաւան մը։

— Երեւանի Պետական Համալսարանը, հիմնուած 1920 Դեկտ. 17ին, իր գոյութեան 40 տարիներու ընթացքին տուած է աւելի քան 10,000 մասնագէտներ։

— Նոր Զրանցքներ.— Վերջերս բացումը կատարուեցաւ Կոտայքի շրջանի ոռոգումներու աշխատանքին, շնորհիւ նորակառոյց ջրանցքին, որուն երկարութիւնն է 45 քմ.։

Նոյնպէս բացումը կատարուեցաւ Արզնի Շամիրամ ջրանցքին առաջին թեւին, որ սկսաւ շահարկուիլ որոշեալ ժամկէտէն առաջ։ Հաղարաւոր հեկտար տարածութեամբ հողեր սկսան ոռոգուիլ այս ջրանցքներուն շնորհիւ։

— Երեւանի Նոր Օդակայանի շինութիւնը աւարտելու վրայ է. անոր վրայ էջք կրնան կատարել ԹՈՒ-104 և ԹՈՒ-114 տիպի օդանաւեր։ Օդակայանի բացումը տեղի պիտի ունենայ 1961ի սկիզբները։

— Նոր Անցառներ Հայաստանի մէջ.—

Եթէ ինքնաշարժով Կիրովական երթալու համար Երեւանէն դուրս ելլէք, ճամբուն վրայ պիտի տեսնէք բազմաթիւ նոր աւաններ՝ բոլորն ալ վերջին ժամանակներու ծնունդ։

Քանաքեռի և Նորքի բարձրաւանդակները ասկէ 15-30 տարի առաջ գրեթէ զուրկ էին բուսականութենէ։

Անցորդները կը տեսնէին չոր ու ցամաք քարեր և արեւէն այրուած դեղնագոյն և տատասկոտ լանջեր միայն։ Այսօր նոյն վայրերուն մէջ փարթամօրէն կ'աճին թզկենիներ, հացենիներ, բախտածառեր, գիհենի, բուրանոճ, սեղիներ, բարտիներ և այլ տեսանի ծառեր։

Պտղատու ծառեր ալ տնկուած են։ Միայն Կոտայքի և Հրազդանի անտառներուն 50 տոկոսէն աւելի պտղատու ծառեր են։

Երեւանի շուրջ 300 հեկտար տարածութեան վրայ ընկուզենի, նռենի, ծիրանի, բալենի և կեռասենի տնկուած են։

Հրազդանը, նախկին Ախտա գիւղը, անցեալին շրջապատուած էր քարքարուտ և անմշակ հողերով, իսկ հիմա զգալի տարածութեան վրայ փարթամ տեսք կուտայ Հրազդան քաղաքին և շրջակայքին։

Դիրքերուն հետ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին քանի մը ամիսներու ընթացքին Գահիրէի մէջ լոյս տեսան շարք մը գիրքեր, որոնց մասին կ'արժէ անդրադառնալ։ Ուրիշ առիթի ձգելով անոնց մասին

Եթէ մէկը Սեւան երթայ իր ուշադրութիւնը պիտի գրաւեն անտառները, նորատեղծ աւաններուն, ելեկտրակայաններուն և գործարաններուն շուրջը։ Նաեւ այգիները և պարտէզները։ Սեւանի ստորերկրեայ ելեկտրակայանը անցնելէ ետք, լիճի ափին՝ բլուրի վրայ դարձեալ կ'երեւան փչատերեւ սաղարթախիտ ծառերու և թուփերու շարքեր։

Աս, Երեւանի բուսաբանական պարտէզի Սեւանի բաժանումն է, իսկ անկէ քիչ աջ՝ Սեւանի անտառները։ Սեւանի լիճէն աղատուած աւազներուն վրայ անտառապատութեան աշխատանքներ կատարուած են։ Միայն այս տարի 1450 հեկտար նոր անտառ մշակուած է։

Սիմոնովկա ռուսական գիւղը անցնելէ ետք ուղեւորին առջեւ կը բացուի Դիլիջանի ձորը իր գեղեցիկ անտառներով, որոնց մեծ մասը վերջին ժամանակներու ծնունդ են։

Արեւատական գեղեցիկ անտառներ շատ կան Դիլիջանի շրջակայքը, որոնցմէ աչքի կը զարնեն կովկասեան, խրիմեան և սովորական սոճիներով հարուստ ծառաստանները։

Դիլիջանէն մինչեւ Ֆիսալետով և անկէ ալ մինչեւ Կիրովական՝ անտառներով ծածկուած են լեռները և սարալանջերը։ Տարիներ առաջ բոլորովին տարբեր պատկեր կը ներկայացնէին այս լանջերը՝ հեղեղատներով կտրուած և քայքայուած կարմրագորշ թեքութիւններ։

Վերջին տասը տարիներուն քսան հազար հեկտար տարածութեամբ ծառեր տնկուած են։

Հայաստանի կառավարութիւնը որոշած է անտառներով շրջապատել բազմաթիւ քաղաքներ և գիւղեր։

գրախօսականներ գրել, այժմ կուտանք անոնց անունները, հեղինակներու և հասցէներու ծանօթութիւններով հանդերձ, առ ի դիւրութիւն ընթերցասէր ազգայիններու։

Ա) «Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը եւ Հայերը» (Սկիզբեն մինչեւ մեր օրերը)։ Հեղինակ՝ Ար. Ալպոյաճեան. հրատարակութիւն՝ Ազգային Հիմնադրամի (թիւ 24), պատկերազարդ, Գահիրէ, 1960. Տպ. Նոր Աստղ, 350 մեծածաւալ էջ. գին՝ 60 ե.Դ.։

Բ) «Ինքնակենսագրութիւն եւ ցուցեր» (Ազգային գործերու յարակցութեամբ)։ Հեղինակ՝ Էօժէն Բաբաղեան, Գահիրէ, 1960, Տպ. Նոր Աստղ, 200 էջ (միջակ ծաւալ, պատկերազարդ)։ Գին՝ 110 ե.Դ.։

Գ) «Հրաշալի Սրինգը»։ Հեղինակ՝ Ստ. Զօրեան։ Մատենաշար «Մանկական Աշխարհ» թիւ 1։ Հրատարակիչ՝ Ն. Քիւփէլեան։ 24 մեծածաւալ էջ։ Գին 12 ե.Դ.։ Զարդարուած գունաւոր պատկերներով։ Տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1960։

Դ) «Հերոսական Հայութեան Անցեալէն» (Զարգերը Հայաստանի մէջ)։ Հեղինակ՝ Ֆայէզ էլ Ղոսէյն։ Թարգմանութիւն և հրատարակութիւն Գր. Պասմաճեանի։ 72 էջ (փոքր ծաւալ, պատկերազարդ)։ Գին 25 ե.Դ.։ Տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1960։

Ե) Աբու Լալա Մահարի»։ Հեղինակ՝ Աւ. Իսահակեան։ Հրատարակիչ՝ Ցար. Մոռալեան, որուն կողմէ գիրքին մէջ աւելցուած են Իսահակեանի բանաստեղծութիւններէն ոմանք, ինչպէս նաեւ անոր մասին գրութիւններ։ 80 մեծածաւալ էջ։ Գին՝ 35 ե.Դ.։ Տպ. Նոր Աստղ, 1961։

Զ) «Լուսերեսն ու Վարդերեսը»։ Հեղինակ Կրիմ։ Հրատարակութիւն «Մանկական Աշխարհ»ի (թիւ 2)։ 24 էջ, գունաւոր պատկերներով։ Գին՝ 12 ե.Դ.։ Տպ. Սահակ-Մեսրոպ, 1961։

ՎԱՐԴԱՏԵՍՔ

Խմբագրութիւնս ուրախութեամբ կ'արձագանգէ հետեւեալ բերկրանիք ամուսնութիւնները, եւ իր խնդակցութիւնները կը յայտնէ ամուսնացեալ զոյգերուն եւ անոնց ծնողաց.

Օրիորդ Ժորժէթ Զէրտէլեան
Պարոն Կարօ Նշանեան

Կնքահայրութեամբ՝
Ազգային Բարերար
Պր. Զարեհ Սագաեանի

23 Ապրիլ 1961:

Օրիորդ Էմմա Գալայճեան
Պարոն Օննիկ Գալուստեան՝

Կնքահայրութեամբ՝
Ազգային Բարերար
Պր. Զարեհ Սագաեանի

23 Ապրիլ 1961:

Օրիորդ Նորա Շամլեան
Պարոն Արթօ Տէր Պօղոսեան

Կնքահայրութեամբ՝
Պր. Օննիկ Ալեքսանեանի

30 Ապրիլ 1961:

Օրիորդ Մարկրիթ Պետիկեան
Մաէսթրօ Եդուարդ Յակոբեան

Կնքահայրութեամբ՝
Մեծահռչակ Երգահան
Արամ Խաչատրեանի

2 Մայիս 1961:

ԳԱԼԱՔ ՍԵՊՈՒՆԴ

Վանիա Յակոբ Էքսէրճեան

Զաւակը Միութեանս եռանդուն անդամներէն եւ Հ. Բ. Ը. Միութեան ՀՄԸՄ.-ՆՈՒՊԱՐ Մարզարանի Վարիչ անդամներէն Տիար Յակոբ Էքսէրճեանի:

ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿ ՄԸ

ԺԱՆ ՀԱՃԵԱՆ

Բարեգործականի փայլուն եւ խոստմնալից սաներէն այժմ Կոնոպլի բժշկական համալսարանի երրորդ տարեշրջանը կը բոլորէ: Ան նամակով մը խնդրած է Բարեգործականի Վարիչ մարմինէն որ այլեւս իրեն որեւէ դրամական օժանդակութիւն չընէ, տըրուած ըլլալով որ ինք գործ գտած ըլլալով ի վիճակի է այլեւս իր ապրուստը աշխատանքով ճարել եւ ուսումը շարունակել: Եւ կը խնդրէ որ իրեն եղած յատկացումը այսուհետեւ տրամադրուի միջոցներէ զուրկ ուրիշ Հայ ուսանողի մը.

Աւելցնենք որ Պր. Ժան Հաճեան, 1958 ին, Ֆրանսայի ամենափայլուն եւ օժտեալ ուսանողներու խումբի մը մաս կազմելով ներկայացուեցաւ Հանրապետութեան Նախագահ Զօր. Տը Կոլի:

Այս հրատարակութիւնը վճարովի չէ
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս
ձեռնարկը աւելի ճոխ եւ շահեկան ընծայելու համար:
— Սեանալու համար դիմել խմբագրութեան —

مطبعة ساهاج مسروب ٢٥ شارع عرابى بالقاهرة
Printed in Egypt by SAHAG-MESROB PRESS, 25 Sharia Oraby, Cairo, U.A.R.